ԱՐԴՅՈ՞Ք ԵՂԵԼ ԵՆ ՀԱԿԱՀԱԿՈԲՅԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ
(հնատիպ սկզբնաղբյուրների քննական վերլուծություն)

ՀՐԱՉԻԿ ՄԻՐԶՈՅԱՆ

Հայ գրատպության 500-ամյա հոբելյանի առթիվ անվարան կարող ենք ասել, որ մինչև օրս վիթխարի գործ է կատարվել հայ գրքի պատմության ուսումնասիրման ու լուսաբանման ուղղությամբ: Հրապարակի վրա առկա մատենագիտական ուսումնասիրությունների հանրագումարն ու վերջին մեծագույն նվաճումը երեք անձնվեր հայուհիների՝ Նինել Ոսկանյանի, Քնարիկ Կորկոտյանի և Անթառամ Սավալյանի բազմամյա համատեղ աշխատանքի արգասիք «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» (Եր., 1988) մատենագիտական կոթողային հատորն է, որն իրավամբ կարելի է համարել հայ հնատիպ գրքի պատմության յուրատեսակ հանրագիտարան, քանզի ներառելով 1095 անուն հրատարակություն՝ գրեթե սպառիչ տեղեկություններ է պարունակում դրանց տպագրության վայրի, թվականի, տպարանի, հրատարակչի, պատվիրատուի, տպագրական արվեստի ու համանման այլ հարցերի մասին: Իսկ որ անչափ կարևոր է, այնտեղ զետեղված են գրեթե բոլոր հրատարակությունների հիշատակարանները, որոնք անսպառ նյութ են պարունակում ոչ միայն հայ գրքի ու գրատպության, այլև նոր շրջանի հայոց պատմության մասին: Խնդրո առարկա մատենագիտության մանրազնին քննությունից պարզվում է, սակայն, որ դեռ շա՛տ բան կա անելու հայ գրքի իսկական պատմության հետազոտման ու լուսաբանման ուղղությամբ: Բանն այն է, որ մինչև այժմ հայ գրքի պատմությունն ուսումնասիրվել է հիմնականում մատենագիտական տեսակետից, այսինքն՝ ուշադրություն է դարձվել գրքի, եթե կարելի է ասել, արտաքին, երևութական հանգամանքների վրա, մինչդեռ ներքին, բուն բովանդակությունը գրեթե չի ուսումնասիրվել կամ ուսումնասիրվել է հպանցիկ ու դիպվածաբար: Բայց չէ՞ որ ցանկացած գիրք ու տպագիր հրատարակություն նախ և առաջ կարևոր է բովանդակության տեսակետից: Ի հաստատումն ասվածի՝ ցանկանում եմ ընթերցողի ուշադրությանը ներկայացնել հայ տպագրության մի բացառիկ էջ, որը, ինչպես հարկն է, չի ուսումնասիրվել ու արժևորվել, մինչդեռ այն կարող է լույս սփռել նոր շրջանի հայոց պատմության, ի մասնավորի XVII դարի պատմական կարևորագույն մի շարք իրադարձությունների վրա:

1693 թվականը հայ գրատպության պատմության մեջ, համաձայն նշված մատենագիտական հատորի, կարևորվում է միայն նրանով, որ այդ թվականի մայիսի 1-ին Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տպարանում, որն առաջինն էր ողջ Մերձավոր Արևելքում, 200-ական օրինակով տպագրվել է մեկական էջանոց (էջամակերեսը՝ 80×28 սմ և 44×35

սմ) համաբնույթ երկու փաստաթուղթ, որոնք, պահպանված լինելով միայն Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի գրադարան-մատենադարանում, հիշյալ մատենագիտության հեղինակները հնարավորություն չեն ունեցել անձամբ տեսնելու, ուստի դրանք նկարագրել են Լ. Մինասյանի ուղարկած լուսանկարի և հաղորդած տեղեկությունների հիման վրա: Իսկ քանի որ Լ. Մինասյանը դեռևս 1970 թ. գրած մի գրախոսականում դրանք համարել է կոնդակ[1], ուստի նշված մատենագետները ևս դրանք նկարագրել են որպես կոնդակ: Ըստ երևույթին հաշվի առնելով այդ երկու փաստաթղթի արտաքին տեսքը, մասամբ և այն հանգամանքը, որ դրանցից առաջինում խոսքը ընդհանրապես կաթողիկոսի ընտրության սկզբունքների, իսկ երկրորդում՝ գործող կաթողիկոս Նահապետ Եդեսացու կաթողիկոսանալու հանգամանքների և գործելակերպի մասին է, առանց խորամուխ լինելու դրանց բովանդակության մեջ, Լ. Մինասյանը գրել է. «Երկու կոնդակի բովանդակությունն էլ բողոք ու հանրաստորագրություն է կաթողիկոսական ընտրության շուրջ»[2]: Ինչպես տեսնում ենք, Լ. Մինասյանը մի կողմից անվանել է կոնդակ, իսկ մյուս կողմից՝ «հանրաստորագրություն», մինչդեռ դրանք փոխբացառող հասկացություններ են: Կոնդակը, գրում է Փ. Անթաբյանը, «հայ մատենագրության մեջ և եկեղեցական կիրառություններում նշանակում է կաթողիկոսական (երբեմն նաև առաջնորդ-եպիսկոպոսի) թուղթ, նամակ, ուղերձ, շրջաբերական, կտակ: Այսօր էլ կոնդակին գլանաձև փաթույթի տեսք են տալիս, ճակատը զարդարում կաթողիկոսական-եպիսկոպոսական խորհրդանշանով և մանրանկարներով: Ունենում է պատմական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավա-վարչական, ազգային-հասարակական, մշակութային, կրթական և այլ բովանդակություն: Ըստ այդմ էլ կոնդակը երբեմն կարևոր պատմական սկզբնաղբյուր է»[3]: Ճիշտ է, մեզ հետաքրքրող փաստաթղթերը նույնպես կարևոր սկզբնաղբյուրներ են հայ եկեղեցու և հասարակական-քաղաքական մտքի պատմության համար, բայց ոչ մի դեպքում կոնդակ չեն, որովհետև դրանք ոչ թե մեկական հեղինակի գործեր են, այլ, լինելով հանրաստորագրություններ, մեկը գրված է քսանյոթ անձանց անունից, իսկ մյուսը թեև չունի որոշակի անձանց ստորագրություններ, բայց դատելով նրա բովանդակությունից, գրված է Նոր Ջուղայի հոգևոր և աշխարհիկ ավագանու անունից, իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտության դեպքում նրա տակ ևս կարող էին ստորագրել մի քանի տասնյակ հոգևորական ու աշխարհական:

Խնդրո առարկա փաստաթղթերը թեև հրատարկվել են նույն օրը նույն տպարանում, բայց դրանցից մեկն ստեղծվել է 1666 թ. սկզբին, իսկ մյուսը՝ 1693 թ. գարնանը: Ընդ որում՝ տպագրվելով նույն օրը՝ դրանք հետագայում արժանացել են տարբեր վերաբերմունքի: Առաջինի ամենավաղ արժևորողներն ու կարևորողները եղել են հենց ջուղահայերի հանրաստորագրության հեղինակները, որոնք ասում են, որ Նա-

---

[1] Տե՛ս **Լ.Մինասյան**, «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակը» և մի քանի նորահայտ գիրք ու այլ ծանոթություններ, «Հասկ», 1970, թիվ 9-10:

[2] Նույն տեղում, էջ 380:

[3] **Փ. Անթաբյան,** Կոնդակ, ՀՍՀ, հ. 5, Եր., 1979, էջ 567:

հապետ Եդեսացու ընտրողները «եթէ հարցն առաջնոց և նոցին կանոնաց ոչ անսան. գոնէ ի մերումս եղեալ ժամանակի հարցն անսասցեն. որ ի թուահաշութեան տոհմիս հայկական. հազար երորդի հարիւրորդի և տասն և հինգ ամի. մեծ անուն վարդապետք. երևելիք. և նշանաւորք ժողովեալ են ի սուրբ աթոռդ Էջմիածին հետևելով հարցն սրբազանից. և քանի՛ գլխով բան կարգեալ յաղագս կաթուղիկոս ձեռնադրութեան. թէ որ ո՛չ լինի այնպէս խոտելի է՛. որոց գրեալ բանքն լուսաւոր հոգի մովսէս վարդապետին ձեռնագրով. և այլ սրբազան վարդապետաց կնքով և գրով առ մեզ է. որոյ սաւատն ևս առ ձեզ առաքեցաք. եթէ այնց բանից միոյն համաձայնի արարեալն ներկայիս. ապա է՛ մեզ ընդունելի՛. իսկ թէ ոչ. մեք ումեք ոչ եմք պարտական. եթէ զպարտսն պահանջեսցէ»[4]:

Դրանից հետո այս փաստաթուղթը, փաստորեն, մատնվել է անուշադրության և այլևս չի վերահրատարակվել ու չի վերլուծվել: Բայց ահա բոլորովին վերջերս Ա. Այվազյանը Լ. Մինասյանի ուղարկած լուսանկարի հիման վրա վերահրատարակել է այն և փորձելով ենթարկել քննական վերլուծության՝ ներկայացրել է որպես 1665 թ. դեկտեմբերի առաջին կեսում Երևանում կայացած հակահակոբյան ժողովի որոշում, որի հետ չենք կարող համաձայնել մի քանի պատճառով.

1. Ինչպես տեսանք 1693 թ. ջուղահայերի հանրաստորագրության վերը բերված հատվածից, որպես տվյալ պատմական իրադարձությունների անմիջական մասնակիցներ ու գլխավոր դերակատարներ՝ հեղինակներն ասում են, որ այդ փաստաղուղթն ստեղծվել է հայկական տոմարի «հազար երորդի հարիւրորդի և տասն և հինգ ամի», այսինքն՝ 1666 թվականին և այն էլ ոչ թե Երևանում, այլ «ի սուրբ աթոռդ էջմիածին»: Իհարկե, այլ պայմաններում կարելի է կասկածել, ինչպես դեռ կտեսնենք, այդ շրջանի առանձին գործիչների հաղորդած տեղեկությունների ստուգությանը, բայց այս դեպքում, կարծում եմ, ոչ մի հիմք չունենք: Չէ՞ որ ջուղահայերի փաստաթղթի կազմմանը մասնակցած գործիչներից շատերը դարի 60-ական թվականներին արդեն Նոր Ջուղայում աչքի ընկած դեմքեր էին, ուստի շատ լավ հիշում էին, թե ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ պայմաններում ու ի՞նչ նպատակով է ստեղծվել տվյալ փաստաթուղթը:

2. Խնդրո առարկա փաստաթղթի ստեղծման ժամանակն ու վայրը փոխելու համար Ա. Այվազյանը հիմք է ընդունում հիմնականում մեկ փաստ. XVII դ. նշանավոր վաճառական Զաքարիա Ագուլեցին հայտնում է, «որ 1665 թ. դեկտեմբերի 3-ին Ագուլիսից մեկնել է Երևան, ուր հասել է չորս օրից, այնուհետև՝ դեկտեմբերի 15-ին, բռնել է վերադարձի ճամփան»[5]: Քանի որ Ագուլեցին, ըստ նրա, «մի խոսք անգամ չի ասում իր ուղևորության դրդապատճառների և Երևանում անցկացրած ութ օրվա անցքերի մասին, որ այլ առիթներով սովորաբար միշտ անում է»,

---

[4] Մեջբերումը կատարել ենք 1693 թ. հրատարակությունից՝ պահպանելով բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

[5] **Արմեն Այվազյան,** Հայոց եկեղեցին XVII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Եր., 2004, էջ 201:

այստեղից ենթադրում է, «որ այդ ձմեռային արագընթաց ճանապարհորդությունը կարող էր ձեռնարկված լինել իր եղբոր՝ հակահակոբյան ժողովի վճռի տակ աշխարհականներից իր ստորագրությունն առաջինը դրած՝ խոջա Շմավոն Ագուլեցու կանչով, քանզի այս երկու եղբայրները մշտապես ու սերտորեն համագործակցում էին և՛ առևտրական, և՛ մյուս գործերում»[6]: Հարկավ ճիշտ է, որ այդ երկու եղբայրները շատ սերտ հարաբերությունների մեջ էին հատկապես առևտրատնտեսական գործերում, բայց ոչ երբեք հասարակական-քաղաքական հարցերում: Ավելին, նույնիսկ առևտրական դաշտում ոչ միշտ էին հաշտ ու համերաշխ, քանզի ավագ եղբայր Շմավոնը՝ որպես բարձրաստիճան պաշտոնյա, ապրում էր Երևանում և հաճախ կնքում էր տնտեսապես ոչ շահավետ գործարքներ, որոնք հետո ստիպված էր լինում կարգավորելու արհեստավարժ վաճառական կրտսեր եղբոր օգնությամբ: Ըստ այդմ՝ վերջինս բազմիցս ստիպված էր եղբոր կանչով անսպասելիորեն մեկնել Երևան կամ մեկ այլ վայր: Այդ է պատճառը, որ Զաքարիայի օրագրության սկզբից մինչև վերջ միալար հնչում է դժգոհություն եղբոր անխոհեմ գործարքների հանդեպ: Բազմաթիվ օրինակներից բերեմ միայն մեկը. 1671 թ. հունվարի 9-ին Ագուլիսում ստանալով եղբոր մահվան գույժը՝ Զաքարիան անկեղծորեն գրում է. «Դարցեալ, ես Զաքարէս որ այս սև գիրս տէսայ, **գ** կսկիծ մտաւ սիրտս. մէկ որ ախպօր մահն, **բ** որ պարտքի ահն, **գ** որ ճանապարհի ցուրտ ու ցաւն»[7]: Տասներկու օր հետո, հայտնում է նա, «յունվարի **իա**ումն Ագուլաց դուս էլայ, դառն, տրտում գնացի Ըսպհան»[8]: Հասնելով Սպահան՝ պարզում է, որ եղբայրը ահավոր մեծ պարտքեր է ունեցել, որոնց պատասխանատուն, փաստորեն, Զաքարիան էր: Հանգամանորեն շարադրելով այդ պարտքերի կուտակման պատմությունը՝ բծախնդիր օրագրողը ցավով գրում է. «Դարցեալ, այս Շմաւոնս եսօր, վաղն գձելով՝ այս պարտքս մնայ: **Ես Զաքարէս քանի անգամ վերստին գնացի Երևան, այս Շմաւոնիս յետ կռիւ, շատ խռովութիւն, թէ՝ կամ դու գնայ Ըսպհան, քո պարտքն տուր, իմ զամինլամէն առ, տուր ինձ, կամ փող տուր, ես գնամ:** Այսպէս ասելով, եսոր, վաղն գձելով մնաց, մինչ որ...»[9] (այս և հետագա ընդգծումներն իմն են - Հ. Մ.): Ինչպես տեսնում ենք, Զաքարիան հաճախ է Երևան եկել առանց եղբոր կանչի, ուստի ոչ մի հիմք չկա 1665 թ. դեկտեմբերյան այցելությունը համարել եղբոր կանչով և այն էլ՝ ժողովի առթիվ ուղարկված հրավերի արդյունք: Մի՞թե բարձրաստիճան պաշտոնյա ավագ եղբայրն իր ստորագրությունը ժողովի որոշման տակ դնելու համար անպայման պետք է ձմեռվա ցրտին Ագուլիսից Երևան հրավիրեր վաճառական կրտսեր եղբորը և խորհրդակցեր նրա հետ: Ասենք նաև, որ նույնիսկ Շմավոն եղբոր կանչով Երևան գալու դեպքում Զաքարիան անպայման ինչ-որ ձևով հայտնում է այդ մասին: Օրինակ, նրա գրառումներից պարզվում է, որ 1667 թվականին հենց Շմավոն եղբոր կանչով ստիպ-

[6] Նույն տեղում:
[7] «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Եր., 1938, էջ 98:
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում, էջ 99-100:

ված է եղել երկու անգամ (հունվարին և հոկտեմբերին) շտապ գալու Երևան: Առաջին անգամվա համար գրում է. «Յունվարի **ժե**ումն Ագուլիս այսօր Երևանայ մին շաթիր եկաւ, ես Զաքարիայ, իմ եխպօր Սիմոնիցն մին գիր բերաւ, թէ հասանել թխթոյս եկ, որ դիր նաչաղ եմ: Ես Զաքարիայ այսօր **բ** մարդով դուրս ելայ»[10]: Հինգ օր հետո հասնելով Երևան՝ իմանում է, որ եղբայրը հիվանդացած է եղել, բայց «լաւացել էր Աստուծով»: Այդուհանդերձ 12 օր մնում է և վերադառնում: Երկրորդ անգամ հոկտեմբերի 15-ին գրում է, որ «այսօր Երևանայ մարդ եկաւ Ագուլիս. ես Զաքարիայ, իմ եխպայր Սիմոն է աղարկել, թէ այ եխպայր Զաքարիայ, հալբաթ շուտ եկ, որ բան ունիմ»[11]: Բնականաբար, հոկտեմբերին ճանապարհ գնալն ավելի դյուրին էր, քան հունվարին, ուստի Ագուլիսից ճանապարհ ընկնելով 16-ին՝ Երևան է հասնում 19-ին: Գալով Երեվան՝ իմանում է, որ մեկ տարի առաջ մահացած Աբասղուլի խանի որդին և փեսան Շմավոնից պահանջում են շտապ վերադարձնել 1480 թուման պարտքը: Չկարողանալով վճարել՝ Շմավոնն այն փոխանցում է եղբոր վրա, որից վերջինս կարողացավ ազատվել եղբոր մահից տարիներ անց՝ դառնությամբ արձանագրելով. «Ես Զաքարէս շատ չարչարանք քաշեցի թէ Ըսպհան, թէ Երևան, քանի քանի անգամ զիս բռնեցին, զնդան գձեցին, բուխավեցին վասն այս վաթանի մոլորած ախպօր Շմաւոնիս համար: Էթէ ամէն բան, ամէն ջաֆայ գրել ի, **ժ** դաւտար լիներ»[12]: Իրավամբ հարց է ծագում. արդյո՞ք նման նպատակ չի ունեցել նաև 1665 թ. դեկտեմբերին Զաքարիայի կատարած ճանապարհորդությունը Երևան:

Ասենք նաև, որ հաճախ չցանկանալով հայտնել իր այս կամ այն ուղևորության բուն պատճառը՝ Զաքարիան այնուամենայնիվ ինչ-որ բան հավելում է այդ մասին: Օրինակ, 1677 թ. գրառումներում կարդում ենք. «1126 դէքտեմբերի **ժը**ումն Թարվեզ ես Զաքարէս գնացի Մարաղայ, **խանին յետ բան ունէի, տէսայ**, մի քանի օր կացայ, 1127 յունվարի **ժա**ումն այլվի եկի Թարվեզ: Ամայ Մարաղայ մին ցուրտ, մին ղիամաթ ձուն եկաւ, որ **ե** օրի մարդ մարդի տուն չի կարաց գնալ. **գ** օրի ձուն էր գալիս, քամի, բօրան սաստիկ»[13]: Այդ տեսակետից ոչ պակաս ուշագրավ է հետևյալ գրառումը. «Թվին **ռճիդ** փետրվարի **իբ**ումն ես Զաքարեայ. այսօր Աքուլաց դուս ելայ, փետրվարի **իէ**ումն եկի Երևան, **Սիամոնի տղոցն յետ բան կեր, տեսայ,** մարտի **իբ**ումն այլվի Երևանայ դուս ելայ, մարտի **իզ**ումն եկի Աքուլիս: Սիամոնի տղայ **Գրիգորն Երևան էր, բերի Աքուլիս: Այս բ ամիս այ, որ գնացել էր իւր ախպէր, քոյրն տեսնելոյ**»[14]: Առերևույթ թվում է, թե գործ ունենք սովորական պարզ տեղեկատվության հետ, բայց այլուստ ծանոթանալով Շմավոն Ագուլեցու ընտանեկան դրամատիկ պատմությանը՝ «Սիամոնի տղոցն յետ բան կեր, տեսայ» արտահայտությամբ մեր առջև բացվում է այդ պատմության

[10] Նույն տեղում, էջ 69:
[11] Նույն տեղում, էջ 70:
[12] Նույն տեղում, էջ 102:
[13] Նույն տեղում, էջ 134:
[14] Նույն տեղում, էջ 125:

ամենալարված էջերից մեկը՝ խորթ եղբայրների հակասությունը հայրական ժառանգության շուրջ: Ցավոք, ներկա դեպքում չենք կարող մանրամասն անդրադառնալ դրան, որովհետև կշեղվենք մեր հիմնական նպատակից:

3. 1665 թ. դեկտեմբերին Ագուլիսից Զաքարիայի Երևան գալն ու վերադառնալը կարող էր լուրջ կռվան ծառայել նման պատասխանատու պնդման համար, եթե նրա օրագրության մեջ դա լիներ միակ դեպքը: Մինչդեռ պարզվում է, որ հաճախ առևտրական գործունեությամբ երկար ժամանակ բացակայելով հայրենի Ագուլիսից՝ Զաքարիան աշխատում էր Նոր տարին դիմավորել սեփական հարկի տակ, ուստի գտնվելով Ագուլիսում, եղբոր խնդրանքով կամ սեփական նախաձեռնությամբ, այցելում էր երևանաբնակ ավագ եղբորը և, իբրև կանոն, Երևանից մեկնում էր ճիշտ դեկտեմբերի 15-ին: Օրինակ, այդպիսի մի այցելություն կատարել է նաև 1657 թ. դեկտեմբերին, ուստի գրել է. «Դեքտեմբերի **գ**ումն ես Զաքարիայ Ագուլաց դուրս ելայ: Դեքտեմբերի **ժե**ումն ես Զաքարիայ Երևանայ դուրս ելայ Աստուծով»[15]:

Իսկ դրանից երեք տարի հետո՝ 1660 թ., թեև Երևան էր եկել հոկտեմբերի 14-ին, բայց մնացել էր ավելի քան երկու ամիս և մեկնել Ագուլիս հենց դեկտեմբերի 15-ին ու տեղ հասել հինգ օր հետո[16]:

4. Ինչո՞ւ պիտի Զաքարիա Ագուլեցու նման ստուգապատում օրագրողը 1665 թվականին կատարած գրառումներում ոչ մի ակնարկ չաներ Երևանում «կայացած հակահակոբյան ժողովի» մասին, բայց հետագայում, լսելով Հակոբ - եղիազարյան յոթնամյա դաժան պայքարի մասին, որպես արձագանք, 1665 թ. գրառումների վերջում հավելեր. «Թվին **ռճժդ** Երուսաղեմայ Եղիազար ոմն վարդապետ դուս եկաւ, եկաւ Ըստամբօլ, Սուլթան Մահամադ թագաւորէն ամբր հանեց, թէ Էջմիածնայ թէ մէռոն, թէ նվիրակ, թէ սեվայգլուխ չի գան Ալի - Օսմանայ երկիրն: Այս պատճառէս Էջմիածնայ առաջնորդ Յակոբ կաթուղիկոսն գնաց Ըստամբօլ, անգաւ Սուլթան Մահամադ թագաւորն. յին գիր կէր թագաւորաց, նշանց ետուր, ղաբուլ արաւ, թէ ինչպէս առաջ կէր, այնպէս լինի: Այս պատճառէս Էջմիածին, Երուսաղէմ մինչի **բգճռ** մառչիլ խարջեցին:

* Վերջն թագաւորէն ամբր դուրս եկաւ, որ կաթուղիկոսն Օսմանցու երկրէն սուրգուն քշեցին, **ըռ** թուման պարտքով փախաւ: Թվին **ռճիա** մայիսի **ժե**ումն եկաւ Էջմիածին. շատ աղմուկ մնաց»[17]:

Կարծում եմ, վերը ասվածը լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ 1665 թ. դեկտեմբերի առաջին կեսում Զաքարիա Ագուլեցու Երևան գալու և գնալու փաստը չի կարող լուրջ կռվան ծառայել այդ օրերին Երևանում հակահակոբյան ժողովի իրողություն ընդունելու համար: Դիտելի է և այն պարագան, որ Ա. Այվազյանը, ասես չհավատալով իր առաջադրած ենթադրությանը, երկիցս այդ ժողովի գումարման վայր է նշում ոչ թե Երևանը, այլ Էջմիածինը (տե՛ս նշվ. աշխ., էջ 207 և 235):

---

[15] Նույն տեղում, էջ 50:
[16] Տե՛ս նույն տեղը, էջ 56:
[17] Նույն տեղում, էջ 66:

Մենք համաձայն չենք նաև խնդրո առարկա փաստաթուղթը հակահակոբյան համարելու Ա. Այվազյանի տեսակետի հետ, այլ, ընդհակառակը, այն դիտում ենք հակոբամետ և ուղղված Եղիազար Այնթափցու պառակտողական գործունեության դեմ: Իսկ ի՞նչ փաստեր ունենք նման պնդման համար: Հանրահայտ է, որ XVII դ. 60-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած ամենակարևոր իրադարձությունը արևմտահայոց կաթողիկոսություն ստեղծելու Եղիազար Այնթափցու փորձն էր, որով հայ եկեղեցին կանգնել էր պառակտման շատ լուրջ վտանգի առջև, որի իրականացումը կարող էր խիստ բացասաբար անդրադառնալ մեր ժողովրդի հետագա ճակատագրի վրա: Զգալով այդ ահավոր վտանգը՝ Հակոբ Ջուղայեցին կարողացավ համախմբել թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ հատվածների հայրենասեր ուժերին և շուրջ յոթնամյա համառ պայքարի ու դրամական աներևակայելի զոհաբերությունների գնով կանխել այդ համազգային աղետը: Ցավոք, աղբյուրների պակասի, ավելի ճիշտ՝ դրանց վատ ուսումնասիրվածության պատճառով հայագիտական գրականության մեջ այդ հարցի վերաբերյալ տեղ են գտել ոչ ճիշտ, մասամբ հակասական տեսակետներ: Մինչդեռ անցյալ դարում ի հայտ բերված մի շարք աղբյուրներ գալիս են լույս սփռելու նոր շրջանի մեր պատմության այդ կարևոր իրադարձությունների վրա: Այս տեսակետից անչափ արժեքավոր է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի արխիվում Արա Գալաջյանի հայտնաբերած փաստաթուղթը, որը հրատարակել է Հ. Քյուրտյանը[18]: Վերջինիս իրավացի կարծիքով, այն կարող է հիմք հանդիսանալ սրբագրելու համար «ժամանակուան եւ դէպքերուն գլխաւոր տեղեկատուն՝ Օրմանեան սրբազանի «Ազգապատում»ը»[19]: Այն, գրված լինելով հենց Հակոբ Ջուղայեցու անունից, պարունակում է խիստ արժանահավատ տեղեկություններ: Նրանում շատ հստակ գրված է. «Ի թուին **ՌՃԺ** եւ **Դ:** Սուրբ յակոբայ տօնի շաբաթ օրն. Մարտիրոս վարդապետն եկն ի սուրբ Էջմիածինն. յաղագս Եղիազարի վարդապետին ցանկապատռութեանն: **Եւ մեր ժողովեալ զմերձակայ վարդապետքն** վասն այն ցանկապատռութեան: **Եւ յետ բազում խօսակցութեան** զայս եդի ճանապարհ առաջի նոցա ասելով»[20]: Ինչպես տեսնում ենք, Հակոբ Ջուղայեցին այդ լուրը Մարտիրոս Ղրիմեցուց ստացել է 1665 թ.՝ Ս. Հակոբի տոնի շաբաթ օրը, որը տոմարական հաշվումներով պետք է լիներ դեկտեմբերի 16-ին[*]: Նկատի ունենալով առաջիկա Ծննդյան տոնի հետ կապված արարողությունները՝ ենթադրելի է, որ Հակոբ Ջուղայեցին մերձակա վարդապետների հետ նշված բազում խոսակցություն -

---

[18] Տե՛ս **Յ. Քիւրտեան,** Յակոբ կաթողիկոս Ջուղայեցիի նորագիւտ խիստ կարեւոր փաստաթուղթ մը (Երուսաղէմի պատրիարքարանի դիւան, թիւ 16/6), «Սիոն», մարտ - ապրիլ, 1969, էջ 126-133:

[19] Նույն տեղում, էջ 126:

[20] Նույն տեղում, էջ 129: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը:

[*] Դրա նախորդ օրը՝ «դեքտեմբերի **ԺԵ**ումն», Երևանից դուրս ելած Զաքարիա Ագուլեցին այդ մասին, բնականաբար, լսել է ուշացումով, ուստի տվյալ օրը կատարած գրանցումներում դրա վերաբերյալ ոչինչ չէր կարող նշել:

քննարկումները կազմակերպել է նախածննդյան ու հետծննդյան օրերին, մշակել գործողությունների որոշակի ծրագիր, տվել անհարժեշտ հանձնարարություններ և մոտավորապես 1666 թ. հունվարի կեսերին կամ վերջերին Մարտիրոս վարդապետի հետ ուղևորվել դեպի Կ. Պոլիս: Մի կողմ թողնելով այդ ուղևորության մանրամասները՝ ասենք, որ, հասնելով Կարին, Հակոբ Ջուղայեցին Կ. Պոլսի իր համախոհներից թուղթ է ստանում, որտեղ ի մասնավորի ասված էր, «թէ սուրբ երուսաղեմայ առաջնորդութիւն դիվրիկեցի ղազար վարդապետն յափշտակեաց յԵղիազարիցն: Ի հասանել թղթոյս դու նի՛ստ ուր որ պատահի **թուղթդ զմարտիրոս վարդապետն թեւօք արծուոյ առ մեզ հասո՛.** եւ այսքան մարդոյ թուղթ գրեա՛: Մինչ ի թօղաթ այլ տեղ չըկայր պատշաճ հասաք ի թօղաթ: զոր ինչ գրեալ էին մեզ՝ **ցուցաք դօլվաթաւորացն:** Եւ **դօլվաթաւորքն եւս զնոյնն պատշաճ տեսին**: Իսկ մարտիրոս վարդապետն առաքեցի իստամբօլ. եւ մեք մնացաք ի թօղաթ, պատուիրելով Մարտիրոս վարդապետին թէ փութով փութով թուղթն ի մեզանից պակաս չառնես»[21]: Կարդալով այս տողերը՝ իրավամբ հարց է ծագում. նամակի հեղինակներն այդ ի՞նչ թուղթ էին պահանջում կաթողիկոսից, որ պատվիրում էին «թուղթդ զմարտիրոս վարդապետն թեւօք արծուոյ առ մեզ հասո՛»: Չմտածե՞լ արդյոք, որ Հակոբ Ջուղայեցին նրանց խոստացել էր պատրաստել ինչ-որ հանրաստորագրություն կամ գուցե հայտնել էր, որ իր հետ բերում է նման կարևոր փաստաթուղթ, որը նրանք ցանկանում էին ստանալ օր առաջ:

Դատելով այս ամենից և հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ հակված եմ կարծելու, որ պոլսեցի նամակագիրները նկատի ունեին արևելահայ հոգևոր և աշխարհիկ երևելիների ստորագրությամբ պատրաստված համապատասխան գրություն, որպիսին էր հենց «Յաղագս կարգի կաթուղիկոս ձեռնադրութեան» խնդրո առարկա փաստաթուղթը:

Անկարևոր չէ և այն պարագան, որ կաթողիկոսը պոլսեցիների գրածը ցույց է տվել նաև դոլվաթավորներին, և վերջիններս նույնպես հավանություն են տվել նրանց պահանջներին: Սա մեկ անգամ ևս փաստում է այն իրողությունը, որ Հակոբ Ջուղայեցին կաթողիկոսական իր քառորդդարյա գործունեության ընթացքում սերտորեն համագործակցել է ժամանակի մեծահարուստների հետ (դրա պերճախոս վկայությունն է նաև վերոհիշյալ նորահայտ փաստաթուղթը), որից, ինչպես դեռ կտեսնենք, դժգոհում էին ժամանակի հոգևոր առանձին գործիչներ:

Բոլոր դեպքերում, «Յաղագս կարգի կաթուղիկոս ձեռնադրութեան» պատմական կարևոր նշանակություն ունեցող փաստաթուղթը ոչ թե հակահակոբյան է, այլ հակաեղիազարյան և ընդունվել է Հակոբ Ջուղայեցու նախաձեռնությամբ ու անմիջական մասնակցությամբ: Այս դեպքում կարող է ծագել առերևույթ դժվար լուծելի թվացող հարց. ինչո՞ւ է Հակոբ Ջուղայեցին ասում, որ «եւ մեր ժողովեալ զմերձակայ վարդապետքն», բայց փաստաթուղթն ստորագրողների շարքում կան ութ

[21] Նույն տեղում:

աշխարհիկների անուններ: Նախ ասենք, որ ստորագրողների անունները տպագրում դրված են էջի ձախ լուսանցքում՝ վերևից ներքև, ընդ որում՝ աշխարհիկների անունները գրված են ավելի խիտ ու մանր տառերով, քան հոգևորականների անունները[22]: Երկրորդ, նույն հակասությունը տեսնում ենք նաև փաստաթղթի վերնագրի և ստորագրողների ցանկի միջև: Բանն այն է, որ վերնագրում շեշտված է՝ «գրեալ ի Մովսիսէ վարդապետէ բջնեցոյ **համաձայնութեամբ սրբազան վարդապետաց և եպիսկոպոսաց՝ վերադրելոց ի քարտիսիս»**, մինչդեռ ստորագրողների ցանկում, բացի սրբազան վարդապետներից, կան նաև ութ աշխարհիկների անուններ, որոնց մասին ոչինչ չի ասվում: Երրորդ, նույնպիսի անհամապատասխանություն տեսնում ենք նաև 1693 թ. նորջուղայեցիների կազմած փաստաթղթում. նրանք մի կողմից ասում են, որ 1666 թ. «**մեծ անուն վարդապետք. երևելիք. և նշանաւորք ժողովեալ են ի սուրբ աթոռդ Էջմիածին** հետևելով հարցն սրբազանից. և քանի՛ գլխով բան կարգեալ յաղագս կաթուղիկոս ձեռնադրութեան. թէ որ ո՛չ լինի այնպէս խոտելի է՛. որոց գրեալ բանքն լուսաւոր հոգի **մովսէս վարդապետին ձեռնագրով. և այլ սրբազան վարդապետաց կնքով և գրով առ մեզ է**. որոյ սաւատն ևս առ ձեզ առաքեցաք», իսկ մյուս կողմից՝ նրանց տպագրած օրինակում կան ութ աշխարհիկների անուններ, որոնց մասին նորից ոչինչ չեն ասում:

Չորրորդ, նույնպիսի տպավորություն ստանում ենք նաև մեզ հետաքրքրող փաստաթղթի ձևի և բովանդակության վերլուծությունից: Ներածական մասում, նշելով տվյալ փաստաթղթի ստեղծման թվականը, ասվում է, որ «**Մեք արարատեան նահանգի վարդապետք և եպիսկոպոսունք. և առաջնորդ վանականա՛ց: Եւ միանգամայն արևելեան կողմանց աթոռոյ ունո՛ղք և ժողովրդեան վերադիտո՛ղք, որ ընդ տէրութեամբ պարսկական արքայից արքայի**. հանդերձ աշխարհիկ արանց մեծամեծո՛ք. գումարեցաք ի մի վայր. և զայս երիս իրս սահմանեալ հաստատեցաք ի միջի մերում. վասն գերագահ աթոռոյն սուրբ Էջմիածնի պայծառութեան. և ժողովրդեան աստուծոյ բարեկարգութեան»: Ինչպես տեսնում ենք, մեջբերման առաջին հատվածը՝ «**Մեք արարատեան նահանգի վարդապետք և եպիսկոպոսունք. և առաջնորդ վանականա՛ց»,** ըստ էության համարժեք է Հակոբ Ջուղայեցու «Եւ մեր ժողովեալ զմերձակայ վարդապետքն» մտքին և արտացոլում է բուն իրողությունը: Վստահ ենք՝ Մովսես Բջնեցու կազմած սկզբնական տարբերակում այդքանով սահմանափակվել է մասնակիցների թվարկումը, բայց ստորագրողներից ոմանք, կարդալով այն, զգացել են, որ դրանով խիստ նեղանում է ստորագրողների աշխարհագրական շրջանակը, և նվազում փաստաթղթի զորությունը, ըստ այդմ՝ պահանջել են ընդլայնել այդ շրջանակը, ուստի Մովսես Բջնեցին հարմար է գտել հավելել «և միանգամայն արևելեան կողմանց աթոռոյ ունողք և ժողովրդեան վերադի-

[22] Ի հաստատումն ասվածի՝ բերում ենք տպագրի լուսապատճենը, որը սիրահոժար մեզ է տրամադրել Սպահանի և Հարավային Իրանի հայոց թեմի պատգամավորական ժողովի նախկին ատենապետ մեծարգո Զարեհ Թորոսյանը՝ օգտվելով պատեհ առիթից, հայտնում եմ խորին շնորհակալությունս:

տողք, որ ընդ տէրութեամբ պարսկական արքայից արքայի» բառերը: Շարունակելով խմբագրված տարբերակի քննարկումը՝ նրանք հասկացել են, որ փաստաթուղթը կազմված է միայն հոգևոր դասի անունից, որով թուլանում է նրա ներգործության ուժը, մինչդեռ այն պետք է ունենար համազգային հնչեղություն, ուստի հարկադրված ավելացրել են նաև «հանդերձ աշխարհիկ արանց մեծամեծօք» բառակապակցությունը, որը օրգանապես չի ձուլվել նախորդ ավարտուն մտքի հետ, որովհետև չի հասկացվում, թե ում տերության տակ են գտնվում նրանք՝ «ընդ տերութեամբ պարսկական արքայից արքայի՞», թե՞ մեկ ուրիշի: Վերջապես, թեև փաստաթուղթն ստորագրել են քսանյոթ հոգի, բայց քանի որ սկզբնապես այն կազմել է Մովսես Բջնեցին, ուստի մեկ անգամ բայը ակամայից գործածված է եզակի թվով՝ «**թողում ասել զչորրո՛րդն**»: Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ աշխարհիկների անուններն սկզբնապես չեն եղել, բայց ելնելով գործնական նկատառումներից՝ հավելել են, երբ արդեն փաստաթուղթը պատրաստ էր, որի հետևանքով առաջացել են նշված անհամապատասխանությունները: Ըստ այդմ, չենք կարող համաձայնել Ա. Այվազյանի այն մտքի հետ, որ այդ «խոջաները հակահակոբյան ժողովին, ամենայն հավանականությամբ, միացել էին՝ Էջմիածնի կաթողիկոսի հետ ունեցած դրամական ինչ-ինչ հաշիվների մղումով: Թվում է՝ այսպիսի վտանգավոր բախումները հետագայում կանխելու մտահոգությամբ է, որ 1677 թ. երկրորդ կեսին՝ մահից ընդամենը երեք տարի առաջ՝ Հակոբ Ջուղայեցին առաջարկում էր Էջմիածնի ֆինանսա-տնտեսական գործերը հանձնել «դոլվաթաւոր երեսփոխանաց» ձեռնհաս կառավարմանը, հաստատելով սույն կարգը այն ժամանակ «յերբ կաթողիկոս լինիք օրհնելոյ»»[23]: Ասում ենք՝ համաձայն չենք, որովհետև Հակոբ Ջուղայեցին ոչ միայն առևտրատնտեսական ու ֆինանսական հարաբերությունների մեջ է եղել հայ, վրացի, հրեա և տաճիկ վաճառականների ու դոլվաթավորների հետ[24], այլև վաղուց ի վեր հայ դոլվաթավորներին մասնակից էր դարձնում Մայր Աթոռի տնտեսության ու եկամուտների հսկողությանը, որից խիստ դժգոհում էին միաբանության առանձին անդամներ: Ա. Այվազյանը, մեծապես կարևորելով Օնոփրիոս վարդապետ Կարկուտի անունով հայտնի փաստաթուղթը[25], դրա հիման վրա փորձում է հակահակոբյան ժողով տեսնել նաև 1664 թ. հոկտեմբերին, բայց, չգիտենք ինչու, անուշադրության է մատնել 17 կետից բաղկացած նրա խզբզանք - բամբասանքների 14-րդ կետը, որտեղ, ի թիվս այլ «դժգոհեցուցիչ փաստերի», սևով սպիտակի վրա գրել է, որ «զարս **գռեհիկս** եւ **աշխարհիկս** ի վերայ **սուրբ աթոռոյս արդեանցն և պտղոցն վերակացու կացուցեալ՝ զլափլիզութենէ նոցին ի տունս իւրեանց ամբարելոցն անփոյթ առնէ»[26]:** Ինչ վերաբերում է մահից ընդամենը երեք տարի առաջ, այսինքն՝ Եվրոպա ուղևորվելուց առաջ նրա տված կարևոր հանձնարարությանը՝ կաթողիկոս օրհնելու ժամանակ «Էջմիածնի ֆինանսա - տնտեսական գոր-

[23] **Արմեն Այվազյան,** նշվ. աշխ., էջ 207:
[24] Մանրամասն տե՛ս «Սիոն», մարտ - ապրիլ, 1969, էջ 129-133:
[25] Տե՛ս «Սիոն», մայիս, 1933, էջ 151-153:
[26] Նույն տեղում, էջ 152:

ծերը հանձնել «դոլվաթաւոր երեսխոխանաց ձեռնհաս կառավարմանը»», ապա պետք է ասել, որ դա սեփական կենսափորձի հիման վրա կատարված խորիմաստ առաջարկություն էր, քանզի նա քաջ գիտեր, որ հոգևորականների շարքերում կան նաև օնոփրիոսատիպ գործիչներ, որոնք մերժում էին Մայր աթոռի գործերին աշխարհիկների միջամտությունը, որպեսզի կարողանան հարմար առիթի դեպքում անձամբ լափլիզել նրա ունեցվածքը: Ի հաստատումն ասվածի՝ կցանկանայի ընթերցողի ուշադրությանը ներկայացնել Ջուղայեցուց հարյուր տարի հետո կաթողիկոսած Սիմեոն Երևանցու հռչակավոր «Ջամբռ»-ում կատարված գրառումներից մեկը. պատմելով այն մասին, որ թուրքական սուլթանից իր նախորդ կաթողիկոս Հակոբ Շամախեցու ստացած չորս ֆերմաների համար ինքը վճարել է յոթ հարյուր հիսուն ղուռուշ, հավելում է. «Նմանապէս և ի նստիլն մեր զկնի Յակովբայ կաթուղիկոսին, զդոյն յիշեցեալ չորեսին ֆարմանսդ ևս այդքան դրամով **հոգացին իշխանքն ի Պոլիս: Որք եթէ Պատրիարքի ձեռօքն իցէն հոգացեալք, քառապատիկ երթայր ծախն: Որ հարկաւոր է գիտել կաթուղիկոսաց, վասն այսորիկ գրեցի»**[27]**:** Կարծում եմ, իրավունք ունեմ ասելու, որ տվյալ դեպքում Սիմեոն Երևանցին բարձրաձայնում է այն, ինչը Հակոբ Ջուղայեցին փորձել էր ապագա կաթողիկոսներին հասկացնել առանց բացատրության:

Ինչպես տեսանք, Հակոբ Ջուղայեցին ասում է, որ ինքը հավաքել է «մերձակայ վարդապետքն» և երկարատև զրուցել նրանց հետ: Բնականաբար, Մայր աթոռում գտնվող ամենայն հայոց հայրապետը Ծննդյան տոնի նախորդ ու հաջորդ օրերին դա պետք է աներ և իսկապես արել է հենց Էջմիածնում, ուստի ճիշտ են նորջուղայեցիները, որ փաստաթղթի ստեղծման վայր են համարում Էջմիածինը: Այլ հարց է արդեն, թե արդյոք ժողով որպես այդպիսին կայացե՞լ է, թե՞ բավարարվել են միայն բազում զրույց - խոսակցություններով, որոնց հիման վրա հանձնարարվել է Մովսես Բջնեցուն կազմել նման փաստաթուղթ՝ համաձայնեցնելով զրույցներին մասնակցած հոգևորականների հետ: Անձամբ ես համոզված եմ, որ բառի բուն իմաստով ժողով չի կայացել, որովհետև նախ՝ իսկական ժողով գումարվելու դեպքում չէին լինի վերը նշված անհամապատասխանությունները, եթե չասենք հակասությունները: Երկրորդ, փաստաթղթի հիմնական կազմող Մովսես Բջնեցին հստակ նշում է դրա ստեղծման թվականը՝ 1666 թ., բայց վայրի մասին ասում է միայն, որ «**գումարեցաք ի մի վայր**»: Վստահ եմ, որ այս անորոշությունը հետևանք է հենց ժողովի կայացած չլինելու: Այլապես, եթե Էջմիածնում իսկապես կայացած լիներ ժողով, ապա Բջնեցին իրեն իրավունք չէր վերապահի, և ստորագրողներն էլ թույլ չէին տա զեղչելու ժողովի վայրի անունը, առավել ևս, որ խոսքը վերաբերում է Էջմիածնին: Երրորդ, ժողով գումարված լինելու դեպքում, որին անպայման պետք է մասնակցեին նաև աշխարհիկները, նրանց մասին կհիշատակվեր նաև

[27] «Ջամբռ, գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէցին: Համաժողովեալ եւ շարադրեալ ի Սիմէօնէ ցաւահար և վշտակոծ կաթուղիկոսէ Երեւանցւոյ», Վաղարշապատ, 1873, էջ 237:

բուն տեքստում և ոչ թե կիավելվեր ուշացումով: Չորրորդ, փաստաթղթի վերնագրում պարզ նշված է՝ «**գրեալ** ի Մովսիսէ վարդապետէ Բջնեցոյ՝ **համաձայնութեամբ** սրբազան վարդապետաց և եպիսկոպոսաց՝ **վերադրելոց ի քարտիսիս**»: Ինքնին հասկանալի է, որ ժողով գումարված լինելու դեպքում նրա ընդունած որոշումը չէր կարող ունենալ այդպիսի վերնագիր: Հինգերորդ, պարզաբանելով իրենց նպատակը՝ հանրաստորագրության հեղինակներն ասում են, թե «**զայս թուղթս զոր գրեցաք**», որով փաստորեն այն անվանում են ոչ թե ժողովի որոշում, այլ պարզապես «թուղթ», այսինքն՝ նամակ կամ գրություն: Վերջապես, բնական է, որ նման պայմաններում անհնար էր գումարել եկեղեցական ժողով, քանզի այդ դեպքում պետք է մասնակցեին բոլոր թեմերի, առավել ևս՝ Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքարանների ներկայացուցիչները, մի բան, որ տվյալ դեպքում ոչ միայն անհնար էր, այլև անցանկալի, որովհետև գնացքը վաղուց էր շարժվել, ուստի պետք էր շտապել:

Ասվածից հետևում է, որ խնդրո առարկա փաստաթուղթը ոչ թե հակահակոբյան ժողովի որոշում է, այլ ստեղծվել է ի պաշտպանություն հայ եկեղեցու միասնականության և ընդդեմ Եղիազար Այնթափցու պառակտողական գործունեության: Ճիշտ է, ստորագրողների թվում կան նաև Հակոբ Ջուղայեցուց նախկինում դժգոհած առանձին եկեղեցականներ, բայց դա հիմք չի տալիս տվյալ փաստաթուղթը համարելու հակահակոբյան: Օրինակ, ստույգ է, որ ստորագրողներից առաջինը՝ Հովհաննես Մուղնեցին, ընդամենը մեկ տարի առաջ՝ 1664 թ. նոյեմբերին, Եղիազար Այնթափցուն գրած նամակներում[28] խիստ դժգոհում էր Հակոբ Ջուղայեցուց, սակայն ավելի վաղ նա թշնամական հարաբերությունների մեջ էր եղել նաև Այնթափցու հետ, որովհետև վերջինս գործուն դեր էր խաղացել 1655 թ. Կ. Պոլսի պատրիարքական աթոռից Մուղնեցու զրկվելու հարցում: Ուստի թեև այդ նամակներով նա փորձել էր կարգավորել իրենց վատացած հարաբերությունները, բայց նոր պայմաններում կարող էր գլուխ բարձրացնել նախկին ոխը: Երկրորդ, որքան էլ չսիրեր Հակոբ Ջուղայեցուն, բայց որպես բանիմաց ու հայ եկեղեցու նվիրյալ գործիչ, կարող էր հասկանալ պատմական պահի լրջությունը և մի կողմ դնել անձնական շահերը ու հանդես գալ ի պաշտպանություն հայ եկեղեցու միասնության: Վերջապես, կար նաև դրամի մյուս երեսը. հարմար առիթ էր կարգավորելու կաթողիկոսի հետ իր հարաբերությունները: Այդ է վկայում թեկուզ այն փաստը, որ մինչև կյանքի վերջը մնաց Մուղնիի Ս. Գևորգ եկեղեցու վանահայր և կարողացավ ավարտել այդ եկեղեցու հիմնովին վերակառուցման աշխատանքները, իսկ մահից առաջ Մուղնիի Ս. Գևորգ եկեղեցու վանահայր նշանակել իր եղբորորդի Դավթին: Հետևաբար, եթե նրա անունը գրված

[28] Տե՛ս «Սիոն», ապրիլ, 1933, էջ 119-122: Ի դեպ՝ հրատարակիչ Մեսրոպ Նշանյանը սխալմամբ կարծել է, թե Մուղնեցին դրանք գրել է «Կ. Պոլսէն», մինչդեռ այդ ժամանակ նա Մուղնիի Ս. Գևորգ եկեղեցու վանահայրն էր, ուստի Ս. Գևորգի վերակառուցման կապակցությամբ արտահայտած դժգոհությունները ոչ թե «Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ մասին է», ինչպես կարծել է հրատարակիչը, այլ Մուղնիի, որի հիմնովին վերաշինությունը նա կարողացավ ավարտել մահվանից (4 ապրիլի, 1669 թ.) ընդամենը մի քանի ամիս առաջ:

է առաջինը, ապա դա բոլորովին չի նշանակում, թե նա ամենատարեցն էր, քանզի ստորագրողների ցանկում կային նրանից ավելի տարեցներ: Օրինակ, թե՛ Ստեփանոս Լեհացին և թե՛ Հակոբ Ջուղայեցին Մուղնեցուց ավելի տարեց էին[29]:

Որ խնդրո առարկա փաստաթղթի ստեղծման նպատակը եղել է հայ եկեղեցու պառակտման կանխումը և ըստ այդմ՝ Եղիազար Այնթափցու պառակտողական գործողության չեզոքացումը, երևում է նաև նրա բովանդակության հետևյալ հանգամանքներից.

ա) Ներածական մասում ասված է, որ այն ընդունել են «վասն գերագահ աթոռոյն սուրբ Էջմիածնի պայծառութեան. և ժողովրդեան աստուծոյ բարեկարգութեան»: Միանգամայն հասկանալի է, որ նոր կաթողիկոսություն ստեղծվելու դեպքում Էջմիածնի գերագահ աթոռը դադարելու էր գերագահ լինելուց, ուստի խամրելու էր նրա պայծառությունը և խաթարվելու հավատացյալ ժողովրդի բարեկարգությունը: Դրանում համոզվելու համար բավական է հիշեցնել, որ Հակոբ - եղիազարյան պայքարի ամենաեռուն շրջանում կողմերի փոխզիջման ու հաշտեցման նպատակով Եղիազարի մշակած տասներկու կետից բաղկացած սահմանադրության նախագծում առաջարկվում էր կաթողիկոսների ընտրությունը իրականացնել փոխհամաձայնությամբ, այսինքն՝ Էջմիածնի կաթողիկոսը կարող էր ընտրվել միայն Երուսաղեմի կաթողիկոսի համաձայնությունն ստանալու դեպքում, և ընդհակառակը: Պարզ է, որ դրանով Էջմիածինն իսկապես զրկվելու էր իր գերագահությունից: Ինչ վերաբերում է հավատացյալ հոտի բարեկարգությանը, ապա նախագծով նախատեսվում էր կաթողիկոսական նվիրակների անարգել ելումուտ մյուս կաթողիկոսության տարածք՝ իհարկե ստանալով նրա համաձայնությունը: Իսկ դա նշանակում է, որ ըստ էության առնվազն կրկնապատկվելու էին հավատացյալներից գանձվող հարկերն ու տուրքերը: Առանց այդ էլ շատերն էին դժգոհում նվիրակների կամայականություններից ու չարաշահումներից: Բնականաբար, Հակոբ Ջուղայեցին մերժեց այն, ուստի մնաց անկատար:

բ) Երկրորդ կետում, կաթողիկոսին արգելելով ինքնագլուխ նշանակել իրեն հաջորդ, փորձում են բացատրել, թե դա ինչպես կարող է իրականանալ, ուստի գրում են՝ «կամ այլ ազգեաց իշխանութեամբ. կամ անիրաւ մամոնայի սփռմամբ. եւ կամ խաբեութեամբ իմիք»: Վերը մենք արդեն տեսանք, որ ստորագրողներն իրենց մասին ասում են՝ «որ ընդ տէրութեամբ պարսկական արքայից արքայի», իսկ այս դեպքում շեշտում են՝ «կամ այլ ազգեաց իշխանութեամբ»՝ անկասկած նկատի ունենալով թուրքական իշխանությունը, որովհետև Եղիազար Այնթափցին «անիրաւ մամոնայի սփռմամբ» և «խաբեությամբ իմիք» (Ապրո Չելեպիի և մյուս յուրայինների միջնորդությամբ) հենց թուրքական իշխանությունից էր ձեռք բերել արևմտահայոց կաթողիկոսություն ստեղծելու

[29] Զաքարիա Ագուլեցին Հովհաննես Մուղնեցու մասին գրում է. «Թվին **ռճժը** ապրիլի **դ**ումն Ագուլիս որ Երևանայ մուղնեցի Ովանէս վարդապետն այսօր առ Աստուած փոխեցաւ: Սա էր **Կ** ամաց:... Սայ անվանի, մեծ վարդապետ էր» («Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», էջ 83-84):

թույլտվությունը և Հալեպում Սսի կաթողիկոս Խաչատուր Գաղատացու կողմից գաղտագողի ձեռնադրվել կաթողիկոս: Փաստորեն, հեղինակները, առերևույթ հակադրվելով «գլուխ ազգի կարգեալ» կաթողիկոսի հետագա հնարավոր քայլերին, իրականում մերժում էին ապօրինի ճանապարհով կաթողիկոսացած Եղիազար Այնթափցուն:

գ) Երրորդ կետում ասվում է, որ եթե առաջին երկու կետերը «յառաջեսցին անհանճար գնացիւք. հա՛րկ լիցի ապա ուրեմն և վարդապետաց և եպիսկոպոսաց. և բոլոր ուխտի վիճակաւորաց. և համայն աշխարհի արանց երևելեաց. ընդ դիմանալ միագունդ պնդութեամբ և ջանալ եղծանել զապարսանութիւն բռնացելոյ կաթուղիկոսին»: Ակնհայտ է, որ սա յուրահատուկ կոչ էր՝ ուղղված համայն հայությանը՝ «միագունդ պնդութեամբ» միավորվելու ընդդեմ Եղիազարի ապօրինի կաթողիկոսացման, քանզի նա հենց նախորդ երկու կետերի «անհանճար գնացիւք», այսինքն՝ կոպիտ խախտմամբ էր դարձել արևմտահայոց կաթողիկոս: Իսկապես հենց այդպես էլ վարվեցին համայն հայության հայրենասեր ուժերը, անգամ իսկ Հակոբ Ջուղայեցուց մինչ այդ դժգոհողներից շատերը և նրա գլխավորությամբ կարողացան կանխել հայոց եկեղեցու պառակտումը: Ուշագրավ է հատկապես հեղինակների այն պնդումը, որ տվյալ փաստաթուղթն ընդունվել է Հակոբ Ջուղայեցու համաձայնությամբ և մասնակցությամբ, առանց որևէ «հակառակութեան եւ երկպառակութեան»: Ըստ այդմ՝ նրանք իրենց պարտքն են համարում մեկ անգամ ևս ընդգծելու, որ այդ ամենն արվում է հանուն Էջմիածնի Մայր աթոռի «հաստատութեան»: Նրանք բառացիորեն ասում են՝ «զայս թուղթս զոր գրեցաք առ Յակոբ կաթուղիկոսն միաբանական համաձայնութեամբ յաղագս հասարակա՛ց. և հաստատութեան սրբոյ աթոռոյն հանրական արամեան ազգիս էջմիածնի. ոչ իմիք հակառակութեան և երկպառակութեան»: Ճիշտ է, այնուհետև ասվում է, որ եթե այս պատճառով հանրաստորագրողներից որևէ մեկին կաթողիկոսն այս կամ այն ձևով վնաս պատճառի, ապա մենք բոլորս պատրաստ ենք միասնաբար վրեժխնդիր լինելու դրա համար, իսկ եթե ստորագրողներից մեկն ու մեկը ետ կանգնի այս պայմաններից, ապա այնպիսին կհամարվի երեք սուրբ ժողովների կողմից անիծված և «լուծեալ ի կարգէն և որոշեալ յաստիճանէն դատապարտական պատժիւք», սակայն այդ ամենի նպատակը ընդգծված հակաեղիազարյան ոգու քողարկումն ու փաստաթղթին ընդհանրական կանոնակարգի տեսք տալն է: Նման եզրակացության հիմք է տալիս այն փաստը, որ առաջադրված բոլոր պայմաններն ու պահանջները մյուսների նման ընդունել է նաև Հակոբ Ջուղայեցին՝ ստորագրելով «Յակոբ պատրիարգ»[30], որը համարժեք է «Յակոբ հայրապետ», այսինքն՝ «Յակոբ կաթողիկոս» հասկացության: Ընդ որում, հոգևորականների շարքում նրա անունը նախավերջինն է: Արդյո՞ք դա նույպես հատուկ նպատակով չի արված: Վստահ եմ, այո՛: Ոչ մի կասկած չունեմ, որ «Յակոբ պատրիարգ»-ը

[30] Ա. Այվազյանն այս անվան դիմաց հավելել է «(՞ - Ա. Ա.)», բայց թե ինչ են նշանակում կրկնակի հարցական նշանները, այդ մասին ոչինչ չի ասում:

հենց Հակոբ Ջուղայեցին է, որովհետև այդ տարիներին ո՛չ Կ. Պոլսում, ո՛չ Երուսաղեմում «Յակոբ» անունով պատրիարք չի եղել, իսկ ուրիշ պատրիարքություն չենք ունեցել:

Ամփոփելով վերը ասվածը՝ հանգում ենք այն եզրակացության, որ «Յաղագս կարգի կաթուղիկոս ձեռնադրութեան» սկսվածքով տպագիր նյութը ոչ թե հակահակոբյան ժողովի որոշում է, այլ Հակոբ Ջուղայեցու անմիջական մասնակցությամբ ստեղծված պատմական կարևոր փաստաթուղթ, որի նպատակը հայ եկեղեցու պառակտման կանխումն ու Եղիազար Այնթափցու պառակտողական գործունեության խափանում էր: Վստահ եմ, որ այն որոշակիորեն ծառայել է այդ նպատակին:

* * *

Վերը հպանցիկ խոսք եղավ տխրահռչակ Օնոփրիոս վարդապետ Կարկուտի անունով հայտնի մի փաստաթղթի մասին, որի իսկությանը վաղուց կասկածել են առանձին հայագետներ (Ա. Հովհաննիսյան, Կ. Ամատունի ևն), բայց Ա. Այվազյանը, լիովին հավատ ընծայելով Օնոփրիոսի գրածներին, փորձում է դրանց հիման վրա հակահակոբյան երեվանյան ժողով տեսնել նաև 1664 թ. հոկտեմբերին: Ներկա դեպքում նպատակ չունենալով հանգամանորեն անդրադառնալու դրան, այնուամենայնիվ հարկ եմ համարում մի քանի օրինակով ցույց տալ Օնոփրիոսի գրածների անտրամաբանական, հակաբանական, եթե չասենք՝ անհեթեթ լինելը: Համաձայն Օնոփրիոսի գրածի՝ ստացվում է, որ 1664 թ. հոկտեմբերին Երևանում մեծահանդես ժողովի են հավաքվել քսանվեց երջանկափառ վարդապետներ ու արհիապատիվ եպիսկոպոսներ (որոնց անունները մեկ առ մեկ թվարկվում են), նրանց մեջ, որպես 27-րդը, ակամայից հայտնվել է նաև ինքը («ընդ որս եւ ես… գտեալ եղէ ի միջի նոցին»): Եվ ի՞նչ: Իբր հավաքվածներն իրեն «բանիւ թղթով եդին երեսփոխան ինքեանց» և առաքեցին Երուսաղեմ՝ Եղիազար Այնթափցու մոտ, որպեսզի կարողանա համոզել նրան, որ «ի ցաւակցութիւն աղճատանաց սուրբ աթոռոյն Էջմիածնայ և բոլոր տանս Հայոց, եւ խոնարհեալ դիմեսցէ ի տեղի ուրեք ի Թէոդուպօլիսն կամ ի Թոխաթ եւ կամ **ուրանօր ինքն կամիցի, եւ զամենեսեան զնոսա առ ինքն կոչելով՝ նստցի դատաւոր ի միջի նոցա**, և արասցէ դատ իրաւամբ և արդարութեամբ ըստ կանոնաց հարցն սրբոց և նախնեաց մերոց, ի մէջ մեր ամենեցուն և ի մէջ կաթուղիկոսի նարդեան ժամուս՝ Տեառն Յակոբայ, որ նստի յաթոռ սուրբ Էջմիածնին»[31]: Եվ այսպես, պարզվում է, որ Հայաստանի քսանյոթ երջանկափառ վարդապետներն ու արհիապատիվ եպիսկոպոսները, թող ներվի ասել, այնքան տկարամիտ են եղել, որ շրջանցելով Երևանի խանին, անգամ իսկ պարսից արքայից արքային, որի ենթակայության տակ էին, և նման դեպքերում նա կարող էր լինել դատավոր, քանզի նրա նոմոսով էր ընտրվում կաթողիկոս, որ որոշել են խնդրել ու աղաչել Եղիազարին, որպեսզի նա բարեհաճի գալ, **ուր որ կամենա**, և արդար դատ անի իրենց և ամենայն հայոց կաթողիկոսի

[31] «Սիոն», մայիս, 1933, էջ 151:

միջև: Ավելին, նրանք այնքան անգետ են, որ չեն էլ մտածում, թե կգնա՞ կաթոիկոսն իրենց հետ, թե ոչ, և կամ՝ եթե նա ևս իրենց նման անգետ գտնվի ու որոշի գնալ իրեն ստորադաս «առ Եղիազար վարդապետն», ապա քանի՞ հոգուց է բաղկացած լինելու նրա համակիրների ջոկատը՝ սպասավորներով ու ծառայողներով հանդերձ:

Այս դատավարությունը ակամայից հիշեցնում է Ավարայրի ճակատամարտից հետո ապստամբ հայ իշխանների ու հոգևորականների Տիզբոն գնալու պատմությունը: Թե պարսից արքայից արքա Հազկերտ Երկրորդն ի՞նչ իրավունքով էր կազմակերպում նման դատավարություն, հայտնի է ամենքին, իսկ թե քսանյոթ երջանկափառ վարդապետներն ու արհիապատիվ եպիսկոպոսներն ինչի՞ հիման վրա են Եղիազար վարդապետին վերապահել այդօրինակ իրավունք, հազիվ թե որևէ մեկը կարողանա պատասխանել այդ հարցին:

Ի պաշտպանություն Օնոփրիոսի՝ ոմանք կարող են ասել, որ համանման տեղեկություն հայտնում է նաև նշանավոր պատմագիր Զաքարիա Քանաքեռցին: Այո՛, բայց նա ոչ թե հոգևորականների այդքան հսկայական թափոր է ուղարկում «արդարադատ» Եղիազարի կամեցած վայր, այլ միայն Օնոփրիոսին է դարձնում բանագնաց, որպեսզի ընդդիմադիրների անունից խնդրի նրան, «թէ դու ե՛կ ի սուրբ Աթոռս, և մեք քեզ տամք զԿաթուղիկոսութիւնն Էջմիածնի՝ արքունական նօմոսիւք»[32]: Նախ, ինչպես տեսնում ենք, միանգամայն տարբեր է Օնոփրիոսի բանագնացության նպատակը: Երկրորդ, Քանաքեռցին անկեղծորեն խոստովանում է, «թէ զոր ինչ լուաք ի համբաւոյ՝ զայն գրեցաք, թէ՛ սուտն և թէ՛ ճշմարիտն, և թէ գովութիւն լիցի և թէ՛ սուտ պարսաւանք՝ նոցա լիցի. և մեք զհրամայեալսն արարաք. և դուք որպէս և կամիք՝ այնպէս արարէ՛ք»[33]: Հարգելով պատմագրի անկեղծ խոստովանությունը՝ կարող եմ ասել, որ նրա լսած ու գրառած տեղեկությունների մեջ կան բազմաթիվ սխալներ ու անճշտություններ, ուստի պետք չէ նրա ամեն մի գրած համարել անառարկելի ճշմարտություն: Ի հաստատումն ասվածի՝ բազմաթիվ օրինակներից բերեմ միայն մեկը. հենց նույն Եղիազարի մասին ասում է, որ նա մահացել է «ի թուին ՌՃԼԹ յօգոստոս ամսոյ ի ԺԴ, յորում աւուր եկն ի սուրբ Էջմիածին. կացեալ Կաթուղիկոս ամս Ը»[34]: Մինչդեռ այլ աղբյուրներից հայտնի է, որ Եղիազարը կաթողիկոսել է ոչ թե ութ, այլ ինը տարի և մահացել է 1691 թ. օգոստոսի 8-ին և ոչ թե 14-ին: Ճիշտ չի նշված նաև նրա Էջմիածին գալու օրը: Ինչ վերաբերում է Հակոբ - եղիազարյան շուրջ յոթնամյա պայքարին, ապա, ըստ Քանաքեռցու, այն ավարտվել է Զուղայեցու հաղթանակով, ուստի «եկեալ Եղիազարն առ նա՝ և արարին հաշտութիւն ընդ միմեանս: Եւ գնաց Կաթուղիկոսն յԵրուսաղէմ. և դարձաւ և եկն ի սուրբ Աթոռն Էջմիածին փառաւորապէս»[35]: Իրականում Հակոբի ու Եղիազարի միջև հաշտություն չի կայացել, նրանք իրար չեն հանդի-

[32] «Զաքարիա սարկաւագի պատմագրութիւն», հատոր երկրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 71:
[33] Նույն տեղում, էջ 143:
[34] Նույն տեղում, էջ 107:
[35] Նույն տեղում, էջ 76:

պել, իսկ Ջուղայեցին Երուսաղեմ է գնացել ոչ թե հարցն իր օգտին լուծելուց հետո, այլ 1667 թ. երկրորդ կեսին, երբ Եղիազարը գտնվում էր Կ. Պոլսում: Վերջապես, Ջուղայեցին 1672 թ. մայիսին Էջմիածին էր վերադարձել ոչ թե «փառավորապէս», այլ ահավոր պարտքերի տակ կքած, որի պատճառով պարտքատերերը երկար ժամանակ նրան հանգիստ չէին տալիս: Զաքարիա Ագուլեցին պատմում է, որ 1672 թ. դեկտեմբերի 28-ին այդ պարտքերը մարելու նպատակով կաթողիկոսը գնացել է Նախավկայի վանք՝ դրամ հայթայթելու, բայց պարտքատերերն այդտեղ ևս հանգիստ չեն տվել նրան, և կաթողիկոսին «առան, տարան Երևան»: Իսկ որ անչափ հետաքրքրական է, նա անկեղծորեն շարունակում է. «Մեք, Զաքարէս, Ծմաւոնի կնիկն գնացաք կաթուղիկոսն մօտ. մեք ել **բ, գճ** թուման կուզէինք կաթուղիկոսէն. բալքի թէ մին քանի թուման առնինք: Տեսանք այսպէս աղմուկ, մեք ել բաց թողինք, եկինք Աքուլիս»[36]:

Խիստ կասկածելի է Օնոփրիոսի կազմած ցուցակի հավաստիությունը, քանզի թվարկված անձանց մեջ կան այնպիսիք, որոնք ոչ մի կերպ չէին կարող լինել հակահակոբյան ճամբարում: Օրինակ, Առաքել Դավրիժեցին իր կոթողային երկը երկարատև ընդհատումից հետո վերսկսել ու ավարտին էր հասցրել հենց Հակոբ Ջուղայեցու հորդորանքով, իսկ մի քանի տարի հետո (1669 թ.) Ոսկան Երևանցին հրատարակեց այն, անշուշտ, նրա գիտությամբ ու հանձնարարությամբ: Նրանում Ջուղայեցուն անվանում է «մեծահոգի և երկայնամիտ», «սրբազան», «խոհական, և մեծահոգի, և արժանաժառանգ» հայրապետ, «մեծ վարդապետ Յակոբ», և այլն, ուստի անհնար է, որ իր ձեռագրի թանաքը դեռ չչորացած (ընդհանուր առմամբ ավարտել էր 1662 թ., բայց շարունակում էր լրացումներ կատարել), մոռանար Ջուղայեցու մասին գրած փառաբանական խոսքերը և Օնոփրիոսի դրդմամբ դառնար հակահակոբյան: Ավելին, նույնիսկ Օնոփրիոսի համախոհ, նրա կազմած ցուցակում առաջինը նշված Հովհաննես Մուղնեցին, 1664 թ. նոյեմբերի 4-ին Եղիազարին գրած մեղայական նամակում խիստ դժգոհելով Հակոբ Ջուղայեցուց, իսկ նոյեմբերի 27-ի նամակում բառացիորեն խնդրելով Եղիազարից՝ անպայման օգնել Օնոփրիոսին, ոչինչ չի ակնարկում հոկտեմբերին Երևանում կայացած հակահակոբյան ժողովի մասին: Ընդհակառակը, Եղիազարի գութը շարժելու համար խտացրած գույներով գրում է. «Յուշ լիցի քեզ վասն Ոնոփրիոս վարդապետիս, զոր **տարադէպն եկն առ քեզ**[37], քանզի սկզբնաչարն սատանայ (համաձայն հրատարակչի ծանոթագրության նկատի ունի Հակոբ Ջուղայեցուն - Հ. Մ.) ոչինչ եթող, զոր ոչ թափեաց զթիւն իւր ի ձեռն արբանեկաց իւրոց ի դա. վասնզի յամենայնէ զրկեալ գտաւ, թէ յըստացուածոց և թէ յիշխանութեանց միանգամայն սուտակասպաս բարեկամաց. ևս ի ձեռն այլազգեաց այնքան ցաւեալ տառապեցաւ, մինչ իւր ընտանիքն ևս թալանեալ

[36] «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», էջ 110:

[37] Ուշագրավ է, որ 1664 թ. նոյեմբերին Օնոփրիոսն արդեն գնացած է եղել Հալեպում գտնվող Եղիազարի մոտ, մինչդեռ ինքն ասում է, որ Երուսաղեմ է ժամանել 1665 թ. մարտի 4-ին և գտել «զԵղիազար վարդապետն կաթուղիկոս եւ պատրիարք օծեալ ի վերայ նոյն սուրբ աթոռոյն ամսօք կանխօք» («Սիոն», մայիս, 1933, էջ 153):

կողոպտեցան՝ թէ՛ ի յայգոյ, թէ ի զարդոյ, թէ ի դրամէ, այժմ ի ներքոյ ծանրաբեռն պարտուց կան անկեալ՝ ոչինչ ունելով յոյս փրծանաց, միայն յԱստուած ապաւինեալ դիմեաց առ գութ եղբօրդ սիրելոյ»[38]: Կարդալով այս տողերը՝ իրավամբ հարց է ծագում. եթե Հակոբ Ջուղայեցին այնքան ուժեղ էր եղել, որ թեկուզ իր արբանյակների, սուտակասպաս բարեկամների և այլազգիների միջոցով կարողացել էր Օնոփրիոսին այնքան ծանր վիճակի մեջ դնել, որ նա ստիպված դիմել էր Հալեպում գտնվող Եղիազարին, այն էլ՝ «տարադէպն», ուրեմն ի՞նչ բանագնացության մասին կարող է խոսք լինել: Նաև երկրորդ հարցը. եթե Օնոփրիոսով հանդերձ քսանյոթ երջանկափառ վարդապետերն ու արհիապատիվ եպիսկոպոսները, որոնց մեջ կային նաև վանահայրեր, այնքան ուժեղ էին, որ կաթողիկոսին հանձնում էին Եղիազարի արտագնա դատաստանին կամ խոստանում էին նրան տալ «զկաթուղիկոսութիւնն Էջմիածնի՝ արքունական նօմոսիւք», ապա ինչո՞ւ էին թողնում, որ կաթողիկոսն իրենց սիրելիին այդպիսի ծանր վիճակի մեջ դներ, և կամ այդքանով միասին ինչո՞ւ չէին կարողանում ինչ-որ ձևով օգնել նրան, որ չդիմեր Եղիազարի օգնությանը:

Պարզապես զարմանք է պատճառում այն փաստը, որ կաթողիկոսին Եղիազարի դատին հանձնող կամ վերջինիս կաթողիկոս դարձնել ցանկացող ժողովականները ավելի քան ինը տարի կաթողիկոսած Հակոբ Ջուղայեցու ընտրության օրինականության հարցն արծարծում են այդքան ուշացումով և այն էլ՝ տասնհինգերորդ կետով, որտեղ ասվում է, որ իբր «ոչ կամօք եւ կտակագրիւ լուսաւոր հոգի Փիլիպպոս հոգևորտիրին եղև սա կաթողիկոս, եւ ոչ հաւանութեամբ ամենայն եպիսկոպոսաց և իշխանաց ազգիս, այլ ինքնագլուխ անձամբ բռնակալեալ տիրապետեաց»[39]: Հարկավ, ես չեմ բացառում, որ քսանյոթ վարդապետների ու եպիսկոպոսների մեջ կարող էին լինել օնոփրիոսատիպ ուրիշներ ևս, բայց ոչ մի կերպ չեմ կարող պատկերացնել, թե ինչպես կարող էին նրանք բոլորը միասին այսպիսի աղաղակող ստեր գրել: Չէ՞ որ նրանցից շատերը, ամենայն հավանականությամբ, մասնակցել կամ ներկա էին եղել կաթողիկոսի ընտրությանը և ստուգապես գիտեին, որ այն տեղի է ունեցել միանգամայն օրինական ճանապարհով: Վերը մենք արդեն տեսանք, թե ինչպիսի հիացական խոսքերով է Առաքել Դավրիժեցին արտահայտվում Ջուղայեցու մասին: Իսկ Զաքարիա Քանաքեռցին, ասես հակադրվելով «ժողովականներին», ավելի ճիշտ՝ Օնոփրիոսին, հայտնում է, որ երբ մահացավ Փիլիպպոս կաթողիկոսը, Հակոբ Ջուղայեցին, որ Փիլիպպոսի օրոք երկար ժամանակ եղել էր «Աթոռակալ և Հրամանատու», գտնվում էր Շամբի - ձորգեղի Ստեփանոս Նախավկայի վանքում, ուստի «առաքեցին սուրհանդակ, և բերեալ զնա՝ և օրհնեցին Կաթուղիկոս ի Ծաղկազարդի կիւրակէն»[40]: Այս դեպքում Քանաքեռցու խոսքը միանգամայն վստահելի է, որովհետև համահունչ է Դավրիժեցու գրածին:

---

[38] «Սիոն», ապրիլ, 1933, էջ 121-122:
[39] «Սիոն», մայիս, 1933, էջ 152:
[40] **Զաքարիա Քանաքեռցի**, նշվ. աշխ., էջ 60:

Մեկ դիտարկում ևս. հայտնի է, որ Հակոբ - եղիազարյան պայքարն ըստ էության հանգուցալուծման հասավ 1667 թ. աշնանը, քանզի երկամյա եռանդագին գործունեությունից հետո արդեն Կ. Պոլսում գտնվող Հակոբ Ջուղայեցին սեպտեմբերի 24-ին Եղիազար Այնթափցուն հղած նամակում առաջարկում էր «կամ ի Կոստանդնուպոլիս եւ կամ ի Զմիւռին պատահիլ միմեանց առ այս գործ»[41]: Անթվակիր պատասխան նամակում (բնականաբար, այն գրվել է սեպտեմբերի 24-ից հետո) Եղիազարը, դառնացած տոնով թվարկելով մի շարք հարգելի ու ոչ հարգելի պատճառներ, ասում է. «Մինչև ցայժմ մարթ է թէ հարկ լիցի անպատճառ զմիմեանս տեսանել, կամ ի Տիգրանակերտն կամ ի Թէոդուպոլիսն ելեալ, զի անդ ելեալ առ քեզ՝ տեսցուք զմիմեանս. և թէ զևս պատշաճագոյնն կամիս՝ անդ ի սուրբ յԷջմիածինն, սկիզբն մերոյ ծագման լուսոյ, գալ գտանել զքեզ և սուրբ սանդարամետիցն երկրպագելով՝ ի վերայ այնմ տեղոյն տեսանել և խօսել զոր ինչ պարտն իցէ. և զամենայն ուխտ և զկամս կատարելով դարձայց ի տեղի իմ»[42]: Իհարկե, Հակոբ Ջուղայեցին իր հերթին չընդունեց Եղիազարի առաջարկած պայմանները, ուստի նրանք այդպես էլ չհանդիպեցին: Բայց ներկա դեպքում դա չէ կարևորը, այլ այն, թէ ինչպե՞ս է պատահել, որ թե՛ Օնոփրիոսի երդմնագրում որպես դատավարության վայր նշված «ի Թէոդուպոլիս կամ Թոխաթ» և թե՛ Եղիազարի առաջարկած հանդիպավայրերի՝ «կամ ի Տիգրանակերտն կամ ի Թէոդուպոլիսն» երկուական տեղանուններից մեկը նույնն է՝ Թէոդուպոլիս: Դիտելի է և այն պարագան, որ ըստ Զաքարիա Քանաքեռցու հաղորդած տարբերակի, իբր օնոփրիոսականներն Եղիազարին առաջարկել էին գալ Էջմիածին, «և մեք քեզ տամք զԿաթուղիկոսութիւնն Էջմիածնի՝ արքունական նօմոսիւք», իսկ Եղիազարն էլ փաստորեն երեք տարի հետո գրած նամակում ցանկություն է հայտնել Ջուղայեցուն հանդիպելու համար գալ Էջմիածին: Արդյոք սա չի՞ նշանակում, որ Օնոփրիոսի անունով հայտնի փաստաթուղթն ստեղծվել է Եղիազարի այս նամակից հետո:

Կարծում եմ, վերը շարադրվածը, ինչպես նաև աղբյուրներում առկա մի շարք այլ տեղեկություններ, որոնք բոլորն այստեղ հնարավոր չէ ներկայացնել, լիովին հիմք են տալիս եզրակացնելու, որ ո՛չ Զաքարիա Քանաքեռցու և ո՛չ առավել ևս Օնոփրիոսի գրածից չի հետևում, որ 1664 թ. հոկտեմբերին Երևանում տեղի է ունեցել հակահակոբյան ժողով, որտեղ որոշվել է Հակոբ Ջուղայեցուն հանձնել Եղիազարի արտագնա դատին, և կամ վերջինիս հրավիրել Էջմիածին ու դարձնել կաթողիկոս՝ փաստորեն գահընկեց անելով օրինական ճանապարհով ընտրված, ինը տարի հաջողությամբ կաթողիկոսած Հակոբ Ջուղայեցուն, որը դեռ կաթողիկոսելու էր ավելի քան մեկուկես տասնամյակ՝ արժանանալով ժամանակակիցների և հետագա սերունդների դրվատանքին ու փառաբանությանը:

---

[41] «Սիոն», հունիս, 1941, էջ 158:
[42] «Սիոն», հուլիս-օգոստոս, 1941, էջ 201:

* * *

Ի տարբերություն «Յաղագս կարգի կաթուղիկոս ձեռնադրութեան» փաստաթղթի, 1693 թ. մայիսի 1-ին Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տպարանում հրատարակված նորջուղայեցիների հանրաստորագրությունը դեռևս 1881 թ. Հարություն Տեր Հովհանյանցը թեև համարել է «արտաքոյ կարգի պատմութեանս» գործ, բայց և այնպես իբրև «ազգային հնութիւն» զետեղել է իր մեծարժեք աշխատության երկրորդ հատորում[43]: Ըստ այդմ, անդրադառնալով այն հարցին, թե ինչու նորջուղայեցիները չհամաձայնեցին ընդունել «կաթուղիկոսանալն Նահապետի», նշում է երկու պատճառ՝ «նախ վասն ոչ սպասելոյ ընդունել զմանսար Ջուղայեցւոց, և երկրորդ յաղագս գոլոյ վասն նորա կարծիք լինելոյ հակամետ հռովմէականութեան»[44]: Թվարկված պատճառներից առաջինին իսկապես մեծ կարևորություն է տրված նամակում, իսկ երկրորդի մասին ոչ մի բառ չի ասվում: Ավելին, նամակագիրները պատրաստ էին նույնիսկ ներելու Նահապետի ընտրության ժամանակ թույլ տրված կոպիտ խախտումները, եթե նա կարողանար իր վարք ու բարքով, նիստ ու կացով և գործելակերպով դառնալ ժամանակի պահանջները բավարարող կաթողիկոս: Ուստի, մի կողմ թողնելով ընտրության հետ կապված հարցերը, տասներկու կետով համառոտ շարադրել են գործող կաթողիկոսից իրենց ունեցած պահանջները և ավարտել հետևյալ բացատրությամբ. «Ահա զայս երկոտասան բանք կարգեալք պահանջեմք ի կաթուղիկոսէն, ո՛վ ոք և իցէ և զայս բանս խնդրանաց եղբայրական սիրով առ ձեզ առաքեցաք իբրև անդամք միմեանց լինելով ցաւակիցք. և դուք տարեալ ցուցէք իւրն. եթէ հաւանի և ընդունի գրով և կնքով իւրով, և վկայութեամբ երջանիկ եպիսկոպոսաց առ մեզ առաքեսցէ իբրև զայետիկար անջինջ մնալ առ մեզ. յայնժամ և մեք սիրով հլու հպատակութեամբ հնազանդ լիցուք նմա իբրև գլխոյ. և ինքն թագաւորեսցէ յեկեղեցիս մեր որպէս զարեգակն. ապա թէ ոչ ընդունիցի զասացեալս մեր և կամ գրեալքս խոտան համարեսցի. յայնժամ զգրեանս մեր դարձուսջիք յետս. յայնմ հետէ գիտեմք և մեք թէ ո՛րպէս պարտն իցէ առնել յամենայն կողմանէ անխիղճ»[45]: Իհարկե, ինչպես ամեն մի բռնակալ, Նահապետ Եդեսացին ևս չկարողացավ վեր բարձրանալ ինքն իրենից և լսել նորջուղայեցիների արդար պահանջները, իսկ վերջիններս՝ որպես իրենց խոսքի տեր ընդդիմադիրներ, կարողացան «առնել յամենայն կողմանէ անխիղճ», ու գրվեց հայոց եկեղեցու պատմության ամենամռայլ էջերից մեկը: Ներկա դեպքում մեզ դա չէ, որ հետաքրքրում է, քանզի այդ մասին բավական շատ է գրվել, այլ այն, թե ինչ էին պահանջում նորջուղայեցիները ապօրինաբար կաթողիկոսացած Նահապետ Եդեսացուց: Նրանց պահանջներից առավել կարևորներն էին. որ կաթողիկոսը նախ՝ ինքը մշտապես զբաղվի ընթերցանությամբ և ինքնակրթութեամբ, իսկ ապա ուրիշներին կրթելու համար

[43] Տե՛ս «Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, աշխատասիրեալ ի Պ. Յարութիւնէ Թ. Տէր Յովհանեանց», հատոր երկրորդ, Նոր Ջուղա, 1881, էջ 114-122:

[44] Նույն տեղում, էջ 114:

[45] Նույն տեղում, էջ 122:

«դպրատունս և զդասատունս հաստատեսցէ յամենայն տեղիս», որովհետև «**շինութիւն և հաստատութիւն ազգի դովաւ լինի**», որ անկիրթ, տգետ ու անարժան մարդկանց չպետք է տա եպիսկոպոսական պատիվ ու վարդապետական իշխանություն, քանզի ականատես լինելով նման փաստերի՝ ուսման ու կրթության ջանադիրները հուսահատվում ու անգործության են մատնվում, որի հետևանքով «**մնայ ազգս ի մէջ անգիտութեան խաւարի յաղագս անընտրութեան**», որ ստորադասներին, առավել ևս՝ բարձրաստիճան հոգևորականներին իրավունք չունի ինքնագլուխ դատելու, որովհետև որքան էլ մեծ լինի նրանց գործած սխալը, միևնույնն է, չպետք է «**թարց ժողովոյ և կանոնաց դատել կամ պատժել**», այլ խոսքով ասած՝ նորջուղայեցիների պահանջները վերջին հաշվով հանգում էին մեկ բանի. որ կաթողիկոսը պետք է կառավարի ոչ թե բռնությամբ «և ուժգնութեամբ բազկի իւրոյ», այլ միայն ու միայն՝ «**արդարութեամբ և իրաւամբք**»: Ավա՛ղ, այս պահանջներն այսօր ևս մեր ժողովրդի համար մնում են նույնքան ցանկալի, որքան ուղիղ 319 տարի առաջ:

Հաշվի առնելով նորջուղայեցիների հանրաստորագրության մեջ արծարծված հարցերի կարևորությունն ու հասարակական հնչեղությունը՝ դեռևս 2001 թ. գրել եմ, որ այն «կարելի է դիտել որպես հայ լուսավորականության առաջին ծրագրային փաստաթուղթ, որը գրված լինելով ոչ թե մեկ, այլ բազմաթիվ անձանց կողմից, փաստորեն արտահայտում էր Նոր Ջուղայի աշխարհիկ ու հոգևոր դասի կամքը, կամ որ միևնույն է, նոր զարգացող հայ բուրժուազիայի մտածելակերպը, հասարակական տրամադրություններն ու մտադրությունները»[46]: Ինչպես գիտենք, պատմական հանգամանքների բերումով Նոր Ջուղայի հայ

[46] **Հ. Ղ. Միրզոյան**, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, Եր., 2001, էջ 78: Ըստ այսմ, չեմ կարող համաձայնել Ա. Այվազյանի այն մտքի հետ, որ «այս արժեքավոր վավերագիրը հետագայում անուշադրության է մատնվել, չարժանանալով որևէ քննության» (նշվ. աշխ., էջ 171): Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ իրեն ծանոթ հեղինակներից միակը Հակոբ Անասյանն է, «որ իր քննության ընթացքում հպանցիկ վկայակոչում է այս վավերագրի մի տեղեկություն» (նշվ. աշխ., էջ 220), ապա նախ՝ ինչպես տեսանք, Հ. Անասյանը միակը չէ և երկրորդ, ցավոք, նա ճիշտ չի մեկնաբանել նորջուղայեցիների հեղինակած վավերագրի համապատասխան տեղեկությունը: Փորձելով հիմնավորել իր այն դրույթը, որ իբր Եղիազար Այնթափցին չէր ցանկանում դառնալ ամենայն հայոց կաթողիկոս և «Կ. Պոլսից այն կողմ գնալ», վկայակոչում է նորջուղայեցիների այն միտքը, որ «ի գնալն յԵրուսաղէմայ նստաւ ի Կոստանդնուպոլիս, ասելով, թէ ո՛չ եկից ի սուրբ Աթոռն [Էջմիածնի] մինչև ոչ գայցէ մանսար Իսպահանու», այնուհետև հավելում է. «Նրան դժվարությամբ կարողացան պոկել Կ. Պոլսից և հազիվ հազ կարողացան ներս մտցնել պարսկական սահմանից» (**Հ. Ս. Անասյան,** XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961, էջ 270): Իրականում նորջուղայեցիները ցանկացել են ընդգծել Եղիազարի խոհեմությունն ու խորագիտակությունը, այսինքն՝ նա քաջ գիտակցել է, որ առանց նորջուղայեցիների համաձայնության կաթողիկոսանալու դեպքում կարող է կանգնել լուրջ դժվարությունների առջև, ուստի դրանից խուսափելու նպատակով սպասել է նրանց ուղարկելիք մանսարին և ստանալուն պես, ասում են նորջուղայեցիները, «իսկույն եկն» Էջմիածին: Ավելին, նրանց խորին համոզմամբ, եթե Եղիազարն առանց իրենց մանսարի չի ցանկացել դառնալ կաթողիկոս, ապա Նահապետի համար «զիարդ հրամայէր լինել առանց մեր մանսարի», ինչպես փորձել են արդարացնել իրենց ապօրինի գործելակերպը Նահապետն ու յուրայինները՝ խնդրելով նորջուղայեցիներից հետին թվով ուղարկել մանսար:

գաղթօջախը, ցավոք, XVIII դարասկզբին աստիճանաբար սկսեց խամրել՝ ծնունդ ու սնունդ տալով հնդկահայ գաղթօջախներին: Այդ է պատճառը, որ նորջուղայեցիների նամակում XVII դարավերջում ձևակերպված հիրավի բուրժուական սահմանադրական գաղափարները շուրջ մեկդարյա ուշացումով իրենց տրամաբանական զարգացումն ստացան հայոց առաջին սահմանադրության՝ Շահամիր Շահամիրյանի հեղինակած «Որոգայթ փառաց» փառահեղ աշխատության մեջ:

Հ. Գ. Նկատի ունենալով հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության ուսումնասիրության համար վերոհիշյալ փաստաթղթերի բացառիկ կարևորությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նորջուղայեցիների նամակի երկրորդ և երրորդ հրատարակություններում տեղ են գտել առանձին սխալներ ու վրիպակներ, անհրաժեշտ եմ համարում ընթերցողի դատին ներկայացնել առաջին հրատարակության հիման վրա պատրաստածս տարբերակը: Իսկ թե նախորդ տպագրությունների համեմատությաբ ինչ տարբերություններ ունի այն, հարկ չեմ համարում մեկ առ մեկ ներկայացնելու՝ վստահ, որ իմանալ ցանկացողն անձամբ կարող է համեմատել դրանք և տեսնել:

Բնագրերը ներկայացվում են ըստ 1693 թ. տպագրության, չեն փոխվել նույնիսկ կետադրական նշանները, բացված են կարճագրությունները, չի դրված ապաթարցի նշանը, իսկ ակնհայտ վրիպակներ նկատելու դեպքում նշվել է ճիշտ ձևը: Առաջին փաստաթղթի ստորագրողների ցուցակը ընթերցողը կարող է տեսնել ներդիր 1-ում*:

Յաղագս կարգի կաթուղիկոս ձեռնադրութեան.
գրեալ ի Մովսիսէ վարդապետէ՛ բջնեցոյ. Համաձայնութեամբ
սրբազան վարդապետաց. և Եպիսկոպոսաց վերադրելոց ի քարտիսի՛ս

Յամի կենարարին մարդեղութեան հազարերորդի և վաթսն երորդի հինգ երորդի՛: Եւ ըստ թուահաշութեան հայկայինս տոհմի՛ հազարերորդի. հարիւրերորդի ընդ հնգետասանեկի մսանկի՛: Մեք արարատեան նահանգի վարդապետք և եպիսկոպոսունք. և առաջնորդ վանականա՛ց: Եւ միանգամայն արևելեան կողմանց աթոռոյ ունօ՛ղք և ժողովրդեան վերադիտօ՛ղք, որ ընդ տէրութեամբ պարսկական արքայից արքայի. հանդերձ աշխարհիկ արարանց** մեծամեծօ՛ք. գումարեցաք ի մի վայր. և զայս երիս իրս սահմանեալ հաստատեցաք ի միջի մերում. վասն գերագահ աթոռոյն սուրբ Էջմիածնի պայծառութեան. և ժողովրդեան աստուծոյ բարեկարգութեան: Նախ զի կաթուղիկոս ոք. մի՛ իշխեսցէ ըստ կամաց իւրո՛ց նստուցանել զով ոք ախորժէ ի տեղի ի՛ւր. եթէ ոչ ըստ ազգաց քրիստոնէի՛ց հանրականա՛ց աւանդութեամբ չորիւք յեղանա-

* Այլուստ հայտնի է, որ Հովհաննես Մուղնեցին մահացել է 1669 թ., Ստեփանոս վարդապետ Լեհացին՝ 1689, «Յակոբ պատրիարգը» (= Հակոբ Ջուղայեցին)՝ 1680 թ., իսկ Շմավոն Ագուլեցին՝ 1670 թ.: Այստեղից ենթադրելի է, որ փաստաթուղթն ստորագրողները 1693 թ. արդեն մահացած էին, ուստի բոլորի անվան դիմաց դրված է խաչանշան:

** Կարդալ՝ արանց:

կօք. այսինքն. կամ վիճակաւ իմիք. որպէս հռովմայեցւոց է՛ սօվորութիւն. կամ ընտրութեամբ հասարակաց. որպէս առաջնոցն և յետնոցն ևս. և կամ ի հաւանութեանց վեհագունի՛ց բազմաց և սրբազան արանց. թողում ասել զչորրո՛րդն որ է վերին յայտնութենէն. որ ա՛յժմ իսկ դադարեալ է և լռեալ վասն անարժանութեան մերում: Եւ ի բա՛ց ի չորիցս յայսցանէ եղելոյ միոյ. կաթուղիկոս ինքնագլուխ մի՛ իշխեսցէ ընտրել զոք ի պատիւ հայրապետութեան փոխանակ իւր արտաքոյ սահմանադրութեան հա՛րց նախնեաց սրբոց: Երկրորդ եթէ բռնասցի գլուխ ազգի կարգեալ կաթուղիկոսն առնել ըստ կամաց իւրոց զարտուղի խորհրդով նստուցանել զոր ոք հաճեսցի անձն իւր փոխանակ իւր. կամ այլ ազգեաց իշխանութեամբ. կամ անիրաւ մամոնայի սփռմամբ. և կամ խաբէությամբ իմիք. ի գրելոց աստի. և ըստ իւրաքանչիւր անուանելո՛ց քարոզ կոչեցելոց վարդապետա՛ց. խոտեսցի ինքն կաթուղիկոսն և ընտրեալ իւր: քանզի թէ սկիզբն սուրբ է և զանկուածն և արմատն. ապաքէն և ո՛ստքն: Իսկ եթէ է՛ ընդ դէմ ճշմարտութեանն մարտնչումն. եղիցի համարեալ ի մասին մեղացն որ ոչ քաւեսցի աստէն և անդէն. որպէս վկայէ՛ տէրունական վճիռն յաւետարանի հռչակութեան: Եւ երրորդ եթէ երկուքս այսոքիկ յառաջեսցին անհանճա՛ր գնացիւք. հա՛րկ լիցի ապա ուրեմն և վարդապետաց և եպիսկոպոսաց. և բոլոր ուխտի վիճակաւորաց. և համայն աշխարհի արանց երևելաց ընդ դիմանալ միագունդ պնդութեամբ և ջանալ եղծանել զապարսանութիւն բռնացելոյ կաթուղիկոսին. որով հո՛տն աստուծոյ արածեսցի ի վայրի դալարօջ. և սնուսցի ի ջուրս հանգստեան. և առաջի երկնաւոր թագաւորին պսակաց յաղթականաց արժանասցին. քան թէ սնոտի երկիւղիւ պարտեցելո՛ց և թուլամորթի՛ց պատժոց. որպէս և իրաւունք համօրէն ազանց ուսուցանեն զսո՛յն զայսոսիկ այսպէս գոլ. վասն որոյ և զայս թուղթս զոր գրեցաք առ Յակոբ կաթուղիկոսն միաբանական համաձայնութեամբ յաղագս հասարակա՛ց. և հաստատութեան սրբոյ աթոռոյն հանրական արամեան ազգիս Էջմիածնի. ոչ իմիք հակառակութեան և երկպառակութեան. եթէ ի պատճառս սորին հոգեկան և մարմնական պատի՛ժ յառաջեսցի ի նմանէ. դառնութիւն ինչ և բանադրանք և կամ տուգանք և զըզուանք ի վերայ միոյ ուրուք գալ. և կամ առ ոմանս իբրու ի յոլովս ի վերայ ամենեցո՛ւնց եղիցի զոր ուխտեցաք և հաստատեցաք համակամութեամբ վրէժ խնդիր լինել մերժեցելոյն. և զվէրս մեզ համարել և կռուել յօժարութեամբ. քան զի եթէ վշտանայ մի անդամն. վշտանալ պա՛րտին ամենայն անդամքն ընդ նմա: Իսկ եթէ ոք յայսցանէ վրիպեալ վերջասցի անհանճար խորհրդո՛վ և ունայնական մտո՛ք. նզովեսցի յերից սուրբ ժողովոյ հայրապետացն. և մասն ընդ յուդայի՛ և խաչահանուացն ընկալցի. որք զճշմարտութիւնն քարոզեցին զթիւրութիւն և զմոլութիւն սերմանեալ ի բա՛ց հերքեցին. և եղիցի այնպիսին լուծեալ ի կարգէն. և որոշեալ յաստիճանէն դատապարտական պատժիւք: Յորոյ վերայ կնքեսցի՛ Ամէնն:

Տպեցաւ սաւատս ի նոր ջուղա ի թուին հազար հարիւր քառասուն և երկու. և Յամսեանն մայիսի ի մէկն:

ՍՈՒՐԲ ԵՒ ՍԻՐԵԼԻ ՊԱՇՏՕՆԱԿՑԱՑ ՄԵՐՈՑ. ԵՒ ՀԱՐԱՁԱՏԱՑ ՀԱՎԱՏԱՐմաց երջանկացելոց եղբարց ճշմարտախոհից և ուղղասիրաց. վերադիտողացդ սրբազանից զետեղելոց ի գերագահ և ի գերահռչակ. ի սուրբ և ի սրբարար Աթոռդ Էջմիածին ի մայրդ հասարակաց. նաև որոց ընդ հովանեաւ դորին որդիացելոց յաշխարհիդ արարադայ և յատրպատականի. Քահանայապետից. և Քահանայից. և համօրէն լրման ուխտի ժառանգաւորաց և վիճակաւորաց սուրբ եկեղեցոյ: Ողջոյն ի քրիստոս մատուցանեմք. սիրալրական սիրով սրբութեան. երկնաւոր խաղաղութեամբն հանդերձ. մեք ի շօշ եղեալ քրիստոնէախումբ դասք եկեղեցականաց և աշխարհականաց: Ընդ որոյ և որով ծանուցանեմք. պատուականութեան ձերոյ. զեղելոց իրաց դիպելոց. որ ի մերումս եղեալ թշուառութեան ամանակի. յանզգուշութեան և յանպատրաստութեան մերոյ պատճառէ. որով կամք ամենեքեան երերեալ և տատանեալ իբրև զնաւ խռովեալ յալեաց ծովու: Քանզի սկիզբն և աւարտ խաղաղութեան զբարեկարգութիւնն լինել իմանամք. զի ուրանօր բարձեալ է բարեկարգութիւն. արմատացեալ լինի աղմուկ խռովութեան, որպէս և տեսանեմք մերովք տեսանելօք: Քանզի ո՛ր քան վախճան առեալ է ի կենցաղոյս. ընդ երանելիսն հանգուցեալ երջանիկ հայրապետն մեր Տէր Եղիազար վրդովումն խռովութեան ոչ պակասի ի մէնջ. պատճառն անխոհեմ և անհանճար մարդոց գործ և արարմունք. որք յիւրեանց փառամոլութեանց ախտիցն ձգեալք և պատրեալք. որոց գլուխ և զօրավիգ զաստապատցի մինասն. որ ոչ գրոց աշակերտեալ ի մանկութենէ. և ոչ ճշմարտութեան վարուց հետևեալ. ոչ զտեսականն ծանուցեալ և ոչ գործնականին մասին հաղորդեալ այլ զօրէն գռեհկաց. զերկրաւորս ևեթ ողջունեալ և ի նոյնն ցանկ դեգերեալ. ժամադիր եղեալ ընդ նահապետին ձեռագրով և կնքով մի մեանց թէ միշտ ի քո կաթուղիկոսութեանդ ես եղեց աթոռակա՛լ. այսու պայմանաւ յառաջեցուցեալ զայդ գործ. որ մեզ ամենեցուն ստոյգ և իրաւապէս յայտնի եղև որ այդ այդպէս է՛. և առաւել քան զայդ գիտակ եղաք ամենայնի զոր չէ պարտ մի ըստ միոջէ արձանացուցանել ի գիրս: Արդ ո՞վ իցէ աստապատցի մինասն որ զայդ առնիցէ. մի թէ ազգս արծաթագին է հօր դորա՛. որ ո՞ւմ և կամիցի՛ վաճառիցէ՛ յաղագս պորտոյ և յորովայնի իւրոյ, եթէ այդպիսի է կարգ և կանոն կաթուղիկոս ձեռնադրութեան. ո՞վ է պակաս քան զնա որ ոչ կարիցէ զոմն կատարօղ ախտի իւրոյ ձեռնադրել կաթուղիկոս. քանզի ի ձերում աշխարհի յոլովք գո՞ն վանորայք և եպիսկոպոսունք. նա և ի մերս աշխարհի. եթէ այդպէս իցէ որ առանց ընտրութեան և վկայականի թղթոյ ձեռնադրեալն է կաթուղիկոս. որում պա՛րտ է հնազանդել*. ո՞վ է որ ոչ կարիցէ իբրև զաստապատցին օծանել զոք ի պատիւ կաթուղիկոսութեան. ո՞վ է որ պակա՛ս է քան զնա որ օծեալ նորա լիցի կաթուղիկոս. և այլոցն ոչ. եթէ նորայն ընդունելի է. ուրեմն այլոցն պարտ է լինիլ և ընդունելի. իսկ թէ այլոցն ոչ. ուրեմն և նորայն ոչ. տինա որ աստապատցին ոչ է ի կարգի հասարակա՛ց. այլ յոռի և անարգ քան զամենեսեան. յաղագս անուսման և անվարժութեան իւրոյ. զոր տգիտութիւնն մայր գոլ սահմանեցին ամենայն մոլութեանց. որովք դա՛

* Պետք է լինի հնազանդիլ

կայ պարաւանդեալ. որ այդպիսի ոճրագործութիւն գործեաց ի մէջ ազգի՛ս. որ և յետ կատարման գործոյն գրեալ են առ մեզ կրկին պատճառ: Նախ թէ ըստ կտակի հոգևոր տիրին արարաք զայս. երկրորդ թէ ի ձէնջ առաքեալ թղթոյն բանիւն գործեցաք: Առաջնոյն զայս պատասխանեմք. թէ եղիազար հոգևոր տէրն ոչ է արարեալ զայդ կտակ. որպէս և կանխագաոյն յայտ իսկ է ձեզ. և յետոյ մեզ ևս եղև ստոյգն յայտնի. զոր եթէ կամիք մեք ծանուսցուք ձեզ զճշմարիտ կտակ հոգևոր տիրին. ա՞րդ որով հետև արար՝ վասն էր ոչ դրոշմեաց ձեռամբ իւրով ի քարտիսի. զոր կանխագոյն իսկ ունէր սովորութիւն յաւարտ բանին դնէր ձեռս ասելով թէ առ ի հաստատութիւն բանիս եդի ձեռադիրս ի վերայ. որ քանի՛ թուղթ առ մեզ գոյ այսպիսի գրեալ և դրոշմեալ. հարկաւորապէս և առաւելապէս դմին իրի յաւետ պա՛րտէր զայդ սովորութիւն ի գործ ածել զի համաշխարհական է բանդ և իրագործութիւն. որով երևի ոչ գոլ ճշմարիտ զասացեալն: Ասեմք թէ և ասացեալ ևս լիցի՛. հայեցարուք ի կարգս և ի կանոնս հարցն սրբոց և երանելի նախնեաց. եթէ այդպես է սովորութիւն և կարգ. որ կաթուղիկոսն. թարց ժողովոյ եպիսկոպոսաց և վարդապետաց, նա՛ և հարց վանականաց լեռնակեաց կրօնաւորաց. և աշխարհաժողով հանդիսի՛. ինքնահաճ կամօք ըստ ախորժակաց սրտի իւրոյ կոչեսցէ զոք ի պատիւ կաթուղիկոսութեան. եթէ այնպիսին ընդունելի եղեալ է. և այժմս լինիցի. ապա թէ թիւր և զարտուղի է յընթացից նախնեաց. ուրեմն ոչ է ընդունելի. եթէ հարցն առաջնոց և նոցին կանոնաց ոչ անսան. գոնէ ի մերումս եղեալ ժամանակի հարցն անսասցեն. որ ի թուահաշութեան* տոհմիս հայկական. հազար երորդի. հարիւրորդի և տասն և հինգ ամի. մեծ անուն վարդապետք. երևելիք. և նշանաւորք ժողովեալ են ի սուրբ աթոռդ էջմիածին հետևելով հարցն սրբազանից. և քանի՛ գլխով բան կարգեալ յաղագս կաթուղիկոս ձեռնադրութեան. թէ որ ո՛չ լինի այնպէս խոտելի է՛. որոց գրեալ բանքն լուսաւոր հոգի մովսէս վարդապետին ձեռնագրով. և այլ սրբազան վարդապետաց կնքով և գրով առ մեզ է. որոյ սաւատն ևս առ ձեզ առաքեցաք. եթէ այնց բանից միոյն համաձայնի արարեալն ներկայիս. ապա է՛ մեզ ընդունելի՛. իսկ թէ ոչ. մեք ումեք ոչ եմք պարտական եթէ զպարտսն պահանջեսցէ՛. այսքան առ առաջինն: Երկրորդին զայս տամք պատասխանի՛ թէ գրեալ եմք մեք. առ տէր Եղիազար կաթուղիկոսն և ոչ կարեմք յուրաստ լինել թէ ո՞ր քան դու կենդանի ես մեր կաթուղիկոս դու ես և յետ քո կատարող եմք կամաց քոց. և քոյոցն առնելոց եմք կաթուղիկոս. ահա Եղիազար հոգևոր տիրին ոչ մի՛ ունէր աշակերտ. այլ յոլով. եթէ մեք յանուանէ՛ մարդոյ անուն գրելա եմք. ապա թէ մեզ վերայ հաստատի բանդ. իսկ թէ անորոշակի եմք գրեալ. ապա զուր և նանի՛ր է մեզ վերայ ասացեալդ և անպատշաճ արարեալդ. ի յաւիտենից ոչ ոք լուաւ. թէ նախ քան զթաղումն վախճանեալ կաթուղիկոսի. օծանիցի նոր կաթուղիկոս. զոր ահա եղև. մի՞ թէ Եղիազար հոգևոր տէրն այր տգէտ երևեցաւ յաչս ոմանց. քանզի իւր խոհեմութեամբն և խորագիտութեամբն ի գալն յերուսաղէմայ նստաւ ի կոստանդնու պօլիս. ասելով թէ ոչ եկից ի սուրբ աթոռն մինչև ոչ գայցէ մանսար իսպահանու. և յորժամ առաքե-

* Կարդալ՝ թուահաշուութեան:

ցաք իսկոյն եկն. այսպէս լինի արարք առն խոհեմագունի. եթէ յաղագս ինքեան այսպէս խորհէր. ապա վասն այլոց զիա՞րդ հրամայէր լինել առանց մեր մանսարի. զոր յետ գործոյն կատարման թարց վկայականի թղթոյ. ապա խնդրեալ էին ի մէնջ մանսար. զոր մեք նարդեանս գրեալն յայնժամն էաք գրելոց. բայց երկրորդ հողեփեռնէսս և գոդդոսս. անկեալ և կործանեալ չաւետս. կաշառակուր եղեալ և արծաթով կուրացեալ. կրկին և երեքկին անգամ ընկալեալ զկաշառ. լիպասի հուքմ հանեալ և առաքեալ առանց մեր մանսարի. սալահի և գիտութեան. որոյ վասն և ինքն կործանեցաւ. և նոր Քալանթար հաստատեցաւ. Մահտեսի խօջա. Պետրոսի որդի քրիստոսիւ օրհնեալ Խօջա՛ Ղուկասն. ամենևին յար և մնան բարեպաշտութեան հօրն իւրոյ: Այսու հետև կաշառն անգործ եղեալ ճշմարտութիւնն է թագաւորելոց և ուղղութիւնն հաստատելոց: Ժա՛մ է այսու հետև մեզ սիրելիք ի քնոյ զարթնուլ. քանզի գիշերն մերժեցաւ. և տիւն մերձեցաւ: Զայս թուղթ վասն այնր առաքեցաք առ մեծութիւն ձեր. զի ցուցանիցէք կաթուղիկոս եղնողիդ. եթէ կամի դա բռնութեամբ և ուժգնութեամբ բազկի իւրոյ տիրել մեզ ոչ կարէ. քան զի մեք ոչ ումեք եմք արծաթագին. զի բարձրեալն որոյ տէրութիւնն սեփական է՛ և իշխանութիւնն բնութեամբ. բռնաբար ոչ ումեք տիրէ. թող թէ մարդ: Իսկ ապա թէ արդարութեամբ և իրաւամբք տիրէ՛. հնազանդիմք և մեք ա՛ռաւել քան զառաւել: Եւ թէ՛ զի՞նչ է արդարութիւն և իրաւունք. այսինքն է գնալ անխոտոր զշաւիղս յառաջնոցն սրբոց. եթէ նախնեացն և գերագունիցն ոչ. սակայն յետնոցն որ ի մերումս ամանակի զառաջնոցն ստացան վարս և առաքինութիւնս. ճշմարտութեան կարգաց և կրօնից հետևելով. զլուսաւոր հոգիք Մովսէս և Փիլիպպոս կաթուղիկոսացն ասեմք որ ի վերջին ժամանակս փայլեցան իբրև զարեգակն ջահաւորեալք ի մէջ սուրբ եկեղեցոյ և յազգս հայաստանեայց: Եւ զի՞նչ է խնդիր մեր և զո՞րս. համառօտաբար կարգեսցուք երկոտասան գլխօք: Նախ զի կաթուղիկոսն միշտ և անպարապ ընթերցցի զաստուածային գիրս և ինքն նովիմբ վարեսցի՛. և վարեսցէ՛ զեկեղեցի՛: Երկրորդ. զի դպրատունս և զդասատունս հաստատեսցէ յամենայն տեղիս. որպէս սովորութիւն է՛ այլ ազգեաց քրիստոնէից. և մանաւանդ թէ մեզ իսկ գլխովին. նա՛ և պարսից ևս. զոր գիտողացն է քաջայայտ թէ ո՞րքան ունին ջանք և փոյթ յայդմ իրի՛. քան զի շինութիւն և հաստատութիւն ազգի դովաւ լինի. որպէս և տեսանեմք խոպանացեալ և անպիտանացեալ ազգն վրա՛ց. յաղագս ոչ ունելոյ փոյթ զայնմանէ: Երրորդ զի և ինքն ասուեղէն զգեցցի՛ և ոչ բամբակեղէն կամ վշեղէն և ոչ այլոց թոյլ տայցէ՛: Չորրորդ. զատ և առանձին ի միաբանից. ոչ յաղո՛թս կացցէ՛. և ոչ հաց կերիցէ՛. այլ ընդ միաբանսն հաղորդեսցի. ի յամենայն աղօթսն և ի հացկերոյթ սեղանատեղսն: Հինգերորդ մի՛ լիցի. առանձին տնտեստուն և մառան. և մի՛ իմ և քո ի մէջ բերիցէ՛ ի հասարակ տան. ինքն իւրայովքն աւելորդօք քան զհարկաւորն շատացեալ. և հասարակն անխնամ և անայցելու մնացեալ կարօտ հարկաւորին. այլ զամենայն մի լիցի. եթէ գանձարան եթէ շտեմարան. եթէ տնտեստուն և եթէ սեղանատուն: Վեցերորդ. մի՛ զարդարեալ սիգաքայլ երիվարօք յոխորտացեալ յօրանայցէ՛. այլ կիս իշեո՛ք շրջեսցի՛. որպէս և տեսեալ իսկ եմք զնախնիսն

աչօք մերովք: Եօթներորդ. ոչ ունիցի երկո՛ւ կամ երեք և չորք փայեակ. որպէս այժմս լսեմք. այլ միով սուրհանդակաւ բաւականանալ որպէս նախնի կաթուղիկոսունքն: Ութերորդ. նոր զարմանս և ծիծաղելիս ոչ առնել. այսինքն. թէ քարշել առաջի ըստ օրինի իշխանաց եդակս. մէկ. երկու. և կամ աւելի և պակաս. և կապել թիւր և ղադարայ. որ կարի հեռի է՛ ի հոգևոր իշխանութենէ. զի զէն զինուորութեան մերոյ ոչ է՛ մարմնաւոր. այլ հոգևոր ըստ առաքելոյ: Իններորդ. ոչ պահել մատաղ մանկունս զսպասաւորս առաջի զարդարեալ զգեստիւք ի գայթակղութիւն տկարամտա՛ց. այլ կատարեալ հասակաւ և մուրուո՛ք սևազգեստ և խոշօրահանդերձ. ի յամօթ հակառակորդա՛ց բամբասողաց: Տասներորդ. արանց տգիտա՛ց և անվարժի՛ց մի՛ տայցէ՛ պատիւ եպիսկոպոսական և իշխանութիւն վարդապետական. քանզի նոքա որ ունին ջան և աշխատասիրութիւն ուսման. տեսանելով զայլս թարց ջանից և աշխատանաց ընկալեալ զպատիւ եպիսկոպոսութեան. և զաստիճան վարդապետութեան. և նոքա յուսահատեալ խափան լինին ի բարի յառաջադիմութենէ. և մնայ ազգս ի մէջ անգիտութեան խաւարի՛ յաղագս անընտրութեան. ըստ արիստոտէլի որ ասէ. եթէ կամիս բարեկարգութիւն տան. ընտրեա զլաւն ի վատթարէն. և զվաստակաւորն յանջանէն. և ըստ իմաստնոյն թէ զփառս իմաստունք ժառանգեսցեն: Մետասաներորդ. ոչ ածել պատիժս անպատշաճս ի վերայ ուրուք անյարմար կարգի և աստիճանի՛. որպէս լսեմք թէ այս ինչ մարդոյ մուրուս կտրեալ է. և այս ինչ մարդ ի սիւն կապեալ. ոչ միանգամ լսեմք. այլ յոլովակի. ուստի՞ ունի օրինակ զայդպիսի անոպայ արարմանց. զայր եպիսկոպոս առանց ժողովոյ և դատաստանի. ի ժամ հացկերութեան և գինի ըմպութեան կապեալ ի սիւն և բրածեծ տալ առնել արանց սրիկայից և ելուզակաց. և յետոյ զմուրուսն հատանել. բարեպաշտն կոստանդիանոս ե՛րբ արար զայդ արիոսի թէպէտ և սպանման էր արժանի. և կամ փոքրն թէոդոս առ նեստոր երբ գործեաց զայդ. և կամ հայրապետքն սուրբք. երբ օրէնս վարկան և իրաւունք համարեցան այդպիսի դատաստանաւ դատել զեկեղեցական. և մանաւանդ եպիսկոպոս. որպէս գրէ սուրբն կիւրեղ աղէքսանդրացի. յաղագս պղծոյն նեստորի թէ լուծումն արարաք զնա յեպիսկոպոսութենէն իրաւամբք ժողովոյն. զի մովսէս հոգևոր տէրն երբ արար զայդ. և կամ լուսաւոր հոգի փիլիպպոս կաթուղիկոսն **.իգ.** ամ վարեալ զկաթուղիկոսութիւնն. երբ և կամ ու՞մ մուրուս կտրեաց կամ սիւն կապեաց. նոյնպէս և յակոբ հոգևոր տէրն. քսան և հինգ ամ կացեալ յաթոռն միայն ոնոփրիոսին էած զայդ պատիժ. նմին աշխարհ վկայէր մահու գոլ արժանի և ոչ լոկ պատժոյ. զոր աժմս* տարի և կէս է քանիսՆ լսեմք զայդպիսի խայտառակեալ. զուր և ունայն պատճառաւ. այդպիսի պատիժ քաղաքական օրինի և դատաստանի է անկ և ոչ եկեղեցական. վասն որոյ ոչ կամիմք զայր եպիսկոպոս կամ վարդապետ. թարց ժողովոյ և կանօնաց դատել կամ պատժել. յորմէ պատճառէ վնասս յոլովս ծնանի զի ժամանակս չար է: Երկոտասաներորդ. մի՛ փոփոխեսցէ զթէմ և զվիճակ եպիսկոպոսաց ըստ նմանութեան բրքիշօյի՛ և շմուէլի որ մինն զմեռեալ եպիսկոպոսաց վիճակն յափշտակէր. իսկ

* Կարդալ՝ այժմս:

միւսն և զկենդանի եպիսկոպոսաց. որպէս գրէ քերթողահայրն մովսէս ի վիպագրութեան իւրում այլ ըստ ուղիղ կանոնաց առաքելական և հայրապետական. իւրաքանչիւր եպիսկոպոս տիրէ յիւրում վիճակին. և իւրաքանչիւր թէմ յիւրում աթոռոյ կացցէ և մնասցէ զոր ի բնէ ունի կարգեալ և հաստատեալ. բայց թէ առաջնորդ եպիսկոպոսն անուղղագործս ունիցի. դատեսցի ըստ իրաւանց կանոնաց եկեղեցոյ. և որպէս արժանն է պատժեսցի. քան զի ի փոփոխմանէ և ի բաժանմանէ բազում չարիս ծնեալ է. ծնանի և ծնանելոց է. ըստ տէրունականն բանի տուն. քաղաք. և թագաւորութիւն բաժանեալ կործանի. և զի ամենեցունցդ է քաջայայտ որ իւրաքանչիւր աթոռ պսակեալ է ընդ իւրոյ վիճակին. որոց ոչ է պարտ բաժանիլ ի միմեանց. թէպէտ յետ սրբասէր կաթուղիկոսին տեա՛ռն փիլիպպոսի. ոմանց բաժանումն եղեալ է. և այն ոչ կանոնական իրաւամբք. այլ յանիրաւ յարձակմանէ. որոց յայսմ հետէ ոչ կամիմք և ոչ թողացուցանեմք լինիլ զայն անկարգութիւն: Եւ ի վերայ այսր ամենայնի. աստապատցի մինասն արտաքսեսցէ՛ և հալածեսցէ ի սուրբ աթոռոյդ և յայրարատ գաւառէ. և կորուսցէ ի բնիկ տեղի իւր. և զոր ինչ ստացեալ է և ունի. խլեսցէ ի ձեռացն. մուրուս կտրելոյ. սիւն կապելոյ. և բրածեծ առնելոյ դա՛ է արժանի. և ոչ այս և այն. հալածեալ կորուսանիցէք ձեռագրով որ այլ յերևան չկոխէ բարի է. ապա թէ ոչ ճշմարտին յայտնի է. մեք առնեմք արքունի հրամանաւ. և գիտեմք թէ ո՛րպէս անպատմելի և անասելի խայտառակութեամբ կորուսանելոց եմք հանդերձ դատապարտական պատժիւք. քանզի դա՛ ևս բազմադիմի կաշառօք կուրացուցանէր զայս գարշելի այրակերպ գազանս. յաղագս ի գլուխ հանելոյ զիւր չարութեան գործն, վասն որոյ ոչ կամիմք այդպիսի բանսարկու և շոգմոգ առն մնալ ի սուրբ և ի հռչակաւոր տեղիդ. այլ յանկեան ուրեք ծակամուտ կացցէ. որպէս և արժան իսկ է: Ահա զայս երկոտասան բանք կարգեալք պահանջեմք ի կաթուղիկոսէն. ո՛վ ոք և իցէ և զայս բանս խնդրանաց եղբայրական սիրով առ ձեզ առաքեցաք իբրև անդամք միմեանց լինելով ցաւակիցք. և դուք տարեալ ցուցէք իւրն. եթէ հաւանի և ընդունի գրով և կնքով իւրով, և վկայութեամբ երջանիկ եպիսկոպոսաց առ մեզ առաքեսցէ իբրև զայետիկար անջինջ մնալ առ մեզ յայնժամ և մեք սիրով հլու հպատակութեամբ հնազանդ լիցուք նմա իբրև գլխոյ. և ինքն թագաւորեսցէ յեկեղեցիս մեր որպէս զարեգակն. ապա թէ ոչ ընդունիցի զասացեալս մեր և կամ գրեալքս խոտան համարեսցի. յայնժամ զգրեանս մեր դարձուսջիք յետս. յայնմ հետէ գիտեմք և մեք թէ ո՞րպէս պա՛ռտն իցէ առնել յամենայն կողմանէ անխիղճ:

Տպեցաւ տիպս երկու հարիւր. ի դրան սուրբ ամենափրկչի վանացս նոր ջուղայու. Յիսպահան Քաղաքի, ի թուում Կենարարին մերոյ հազար վեց հարիւր նսուն և երեք: Եւ ի Հայոց. հազար հարիւր քառասուն և երկու: Յամսեանն Մայիսի ա:



Յաղագս կարգի կնոջս. ձեռնադրութեան. գրեալ ի Մովսիսէ վարդապետէ բշնեցւոյ. Համաձայնութիւն սրբազան վարդապետաց. և Եպիսկոպոսաց. վերադրելոյ ի քարտիսին

†

ԱՄԻ ԿԵՆԱՐԱՐԻՆ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ՀԱՆՁԱՐ

Երորդի. Եւ մինչեան երորդի հինգ երորդի. Եւ ըստ թուականութեան հայկազանց տոմարի հազար երորդի. հարիւրերորդի. ընդ հինգերորդ ամենեկի մանկի. Մինչ արաքատեան նահանգի վարդապետք և եպիսկոպոսք. եւառասներորդ վանականաց. Եւ միանգամայն արևելեան կողմանց ամենայն ունողք ուժողորդեան վերադիտողք. որոնք տերութեան պարսկական արքայից արքայի. հանդերձ աշխարհիկ արարանց մեծամեծաց. գումարեցաք ի մի վայր. Հայոց երիս իրս սահմանեալ հաստատեցաք ի մերում վանս գերագոյն աթոռոյն սբ Էջմիածնի սրբոյն Գրիգորի. Ուժողորդեան այ բաղ կարգութեան. Նախ զի կնոջս ոչ. մի իշխեսցէ ըստ կամս իւրոց նստուցանել զոք ախորժէ ի տեղի իւր. եթէ ոչ ըստ ազգաց քրիստոնեից հանրականաց. առանդութեամբ չորիւք յեղանակաւք. այսինքն. կամ միձնակաւ իմիք. ոչ առաջնոյն եկեալ նոյն և ու. Եկամ ի հաստատութեան վերոյ ասեալ ի ազգաց. Թողում ասել զչորրորդն որ վերին յայտնութեան. որ այժմ իսկ գաղարեալ է. Եւ մեր անարժանութեամբ մերում. Եւ ի բաց ի չորիցս յայսցանէ եղելոյ մի ոչ. կնոջս ինքագլուխ մի իշխեսցէ ընտրել զոք ի պատիս հայրապետութեան միոնանակ իւր արտաքոյ սահմանադրութեան հարց նախնեաց սրբոց. Երկրորդ եթէ բռնացի գլուխ ազգի կարգեալ կնոջսն առնել ըստ կամս իւրոց զոր տուգի խորհրդով նստուցանել զոր ոք հաճեցի անձն իւր փոխանակ իւր. կամ այլ ազգեաց իշխանութեամբ. կամ անիրաւ մամոնայի սիրամարգ. Եկամ խաբեութեամբ ի միջ. ի գրելոց աստի. Եւ ըստ իւրանչիւր անուանելոց քարոզ կոչեալոց վարդապետաց. խստեսցի ինքն կնոջսն ընտրեալ իւր. քանզի թէ սիրիցն սբէ Եղանկաւծն Եարմատն. ապաքէն Եհատաւ. իսկ եթէ է ընդ գէմ ճշմարտութեան մարմնոյն. Եղիցի համարեալ ի մասին մեղացն որ ոչ քաւեսցի աստէն Եանդէն. ոչ միայէ տերունական միհին յաւերասանի հոչակութեամբ Եւ երրորդ եթէ երկուքս այսոքիկ յառաջեսցին անհանձար գնցիւք. հարկ լիցի ասալ ուրեմն Եպարդապետաց Եեպիսկոպոսաց. Եբոլոր ուխտի միհանգամուրոց. Եհամայն աշխարհի արանց երեերեաց. ընդ գիմանալ միագութեամբ պնդութեամբ և ջանալ եղծանել զապարասանութիւն բռնացելոյ կնոջսին. որոյ հնան այ արա ծեցի ի վայրի դաղարոյ. Եանուսցի ի ջուրս հանգստեան. Եառաջի երկնաւոր թագաւորին պատակաց յաղթականաց արժանասցին. քան թէ սնոտի երկիւղի պարտեցելոյց Եթուլամորթից պատժոց. ոչ Եիրաւունք համարեն ազանց ուսուցանեն զսոյն զայսոսիկ այսպէս գալ մնոյ Եզայս թուղթս զոր գրեցաք առ. Յակոբ կնոջսն միաբանական համաձայնութեամբ յաղագս հասարակաց. Եհաստատութեան սրբոյ աթոռոյն հանրական արտաքոյ ազգիս Էջմիածնի. ոչ ի մի հակառակութեան Եերկպառակութեան. եթէ ի պատճառս սորին հոգեկան մարմնական պատիժ յառաջեսցի ի նմանէ. գառնութիւն ինչ ի բանադրանք Եկամ տուգանք Եաղբատանք ի վերայ միոյ ուրուք գալ. Եկամ ոմանս ի բրա. ի յոլովս ի վերայ ամենեցուն եղիցի զոր ուխտեցաք Եհաստատեցաք հանմամամութեամբ մրեժ խնդիր լինել մերժեցելոյն. Եզմերս մեզ համարել Եկառել յժարութեամբ քան զի եթէ վշտանայ մի անդամն. վշտանալ պարտին ամ ան դամքն ընդ նմա. իսկ եթէ ոչ յայսցանէ մրիպեալ մերոյ ազգի անհանձար խորհրդով Եառնայական մտոք. Նզովեսցի յերից սր ժողովոյ հայրապետցն. և ման ընդ. յուդայի Եխաչահանուացն ընկալցի. ոչ զՁճմարտութիւն քարոզեցին զմիութեամբ Եզմոլութեամբ սերմանեալ ի բաց հերքեցին. Եեղիցի այնպիսին լուծ ի նկարգէն. Եորոշեալ յատուածանէն դատապարտական պատժիւ. Յորոյ վերայ ինքեսցի Ամէն.

Տրեցաւ առաւտս. ի նոր ջուրս ի թուին հազար հարիւր քառասուն և երկու. և Յամանանմայիսի ի մէկն։ 1693

Յովհաննէս վարդապետ մուղնեցի†

Մովսէս վարդապետէ կնիքս Եգի ծ†

Միքայէլ վարդապետ. եառաջնորդ. սբ Նախավկայիցն†

Եղայի վարդապետ առաջնորդ. սբ կարապետաց†

Պետրոս վարդապետ ագուլեցի†

Մանուել վարդապետ ջուղայեցի†

Երեմիա վարդապետ մեղրեցի†

Յովհաննէս վարդապետ կարվեցի†

Գաբրիել վարդապետ†

Ստեփաննոս վարդապետ լէհացի†

Փիլիպպոս վարդապետ†

Մինաս վարդապետ†

Մանուել վարդապետ†

Յակոբ եպս†

[illegible]

Դաւիթ վարդապետ†

Խաչատուր եպս†

Յակոբ պատրիարգ†

Խաչատուր վարդապետ չախատարանցի†

Ագուլեցի Խաչայ չմառն†

Մելիք գասպար երևանցի†

Խաչա բարաքիազ ագուլեցի†

Սարգիս նորբցի†

Թադեոս երևանցի†

Յարութիւն մարտքի որդի†

Սարգիս դարբեցի†

Յակոբջան երևանցի†



ԵՒ ՍԻՐԵԼԻ ՊԱՀՈՅԱՑԱՑ ՄԵՐՈՅ· ԵՒ ՀԱՐԱՔԱԼՏԱՑ ՀԱԼԻԱՏԱՐ

մոց.երկանկալելոց եղբարց Աշխարհասփռեալոց ի աւուրսդ.վերադիտողացդ սրբազանից զետեղելոց
ի դերադարձ և ի բերանս ձայի.ի ոչ ի սրբարար Աթոռդ Էջմիածին ի մայրդ հասարակաց. նա և որ
ոց ընդ հովանեաւ գորին որդեացելոց.յաշխարհիդ արարատայ և յտարպատականի. քահանայս
ոեանից. և քահանայից.և հանդերձ ըստն ուխտի ժառանգաւորաց ևմիհնակաւորաց որ եկեղեցոյ։ Ող
ջոյն ի քրիստոսի մատուցանեմք. սիրարկան սիրով սրբութիւն. երկնաւոր խաղաղութիւն հանդերձ.մեք ի շշ
եղեալ բրիստոնեաթամբ դասք եկեղեցականաց և աշխարհականաց։ Ընդ որոյ և որով ծանուցանեմք. պատուականութիւն
ձերոյ. ղեղեալոց իրաց դիպելոց.որի մերումս եղեալ թշուառութիւն ոմանակի. յանդգնութիւն և յանպատրաստութիւն մե
ր. որ պատճառեալ. որով կամք ամբն երերեալ և տատանեալ.իբրև զնաւ խոտեալ յալեաց ծովու։ Քանզի սիրոյն և առատ
խաղաղութիւն զբարեկարգութիւն լինել իմանամք. զի ոչ բանօր բարձեալ բարեկարգութիւն. արմատացեալ լինի աղմուկ
խռովութիւն. ապ և առեանեմք մերոյք տեսանելեաց։ Քան զի որ քան վխճանն առեալ ի կենցաղոյս.ընդ երանելիսն հան
գուցեալ երկնային հայրապետն մեր Տէր Եղիազար վրդովեաւն խռովութիւն ոչ պակասի ի մենք. պատճառն ոմանք՝ և
ան հանձնոր մարդոց գործ և արարմունք. զոր յիրենց փառասիրութեան ախտին ձգեալք և ապատրեալք. որոց գլուխ
և զօրավիգ զաստաղաստոցի միաբան. որ ոչ դրոց աշակերտեալ ի մանկութիւն. և ոչ ճշմարտութիւն վարուց հետևեալ. ոչ զտե
սականն ծանուցեալ.և ոչ գործնականին մասին հաղորդեալ այլ զօրէն գռեհկաց.զերկրաբոս և ԼԵԹ ողնուեալ և ի նոյնն
ցանկ դեգերեալ. ժամադիր եղեալ ընդ նաստանին ձեռաւորով և ինքով մի մեանց թէ միշտ ի.քո կաթուղիկոսութիւ
ն եղէց աթոռակալ. այսու պայմանաւ. յուսալիցս.ցեալ ըստդ գործ. որ մեզ ասիցն սոսոյգ և իրաւաւոյ յայտնի եղև. որ
ոյդ այդոյ. և առաւելքան զայդ գիտակ եղաք ամի զոր չէ պարտ մի ըստ միոջի արձանացուցանել ի գիր։ Արդ ամ
իցէ ասատատոցի միաբան որ զայդ առնիցէ.մի թէ ազգս արծաթագիսէ հօր դորս. որ ոմ և կասմիցի վաճառիցէ յաղա
գս պորոյ և յորոյանի իւրոյ.եթէ այդպիսի կարգ և կանոն կիցէս ձեռնադրութիւն. ոմէ պակաս քան զնս որ ոչ կարիցէ
զանն կատարող ախտի իւրոյ ձեռնադրել կիցէս. քանզի ի ձերում աշխարհի յալոմք գան վանորայք և եպիսկոպք նա և ի
մերս աշխարհի. եթէ այդպէս իցէ որ առանց ընտրութիւն և ևմիոյականի թղթոյ ձեռնադրեալն կիցէս.որում պարտէ հր
նադանդել.ոմէ որ ոչ կրիցէ իրրև զաստատոցին ծանանել զոր ի պատիւ կիցէս։ ոմէ որ պակասէ քան զնս որ ծնե
ալ ի ներ ի կիցէ կիցէս. և այլոցն ոչ. եթէ նորայն ընդունելիս.ուրեմն այլոցն պիտի ընդունելի։ իսկ թէ այլոցն ոչ.ուրե
մն և նորայն ոչ. տինա որ ատատատոցին ոչէ ի սրդի հասարակաց. այլ յոռի և անարգ քան զնմին. յաղագս անուանն
և անվաւաքութիւն իւրոյ. զոր տգիտութիւն մայր գոլ սահմանեցին ամ մեզ թէ.ն։ որովք դա կայ պատրաստ դեռ. որ
այդպիսի ոճիրագործութիւն գործեաց ի մեզ ազգիս. որ և իրոյ կատարման գործոյն գրեաբեն առ մեզ կրկին պատճառ։
Նախ թէ ըստ կանոնի հոգևոր տիրին արարեալ զայդ կտակ. ոչ և կանխագոյն յայտ իսկ ձեզ և
նոյն զայս պատասխանեմք. թէ եղիազար հոգևոր տէրն ոչ արարեալ զայդ կտակ. ոչ և կանխագոյն յայտ իսկ ձեզ և
յետոյ մեզ և ևս եղև զտոյգն յայտնի. զոր եթէ կամիք մեք ծանուցցուք ձեզ զշարիս կտակ հոգևոր տիրին. արդ որ
ոյ հետև արար մեր ոչ գրոշմեաց ձեռամբ իւրով ի.քարտիսի. զոր կանխագոյն իսկ ունէր սոմբրութի յառարտ բանին
դներ ձեռս ասելով թէ առ ի հաստատութի բանիս եդի զձեռագիրս ի վրա. որքանի թուղթ առ մեզ գոյ այսպի
դրեալ և դրոշմ.հարկատարաց և առաւելապես դմին իրի յաւէտ պարտեր զայդ սոմբրութի ի գործ ածել զի հանշ
խարհանեն բանդ և իրագործութի.որվ երևի ոչ գոյ ձշմա զասցեալս։ Ասեմք թէ և ասացեալ ևս լիցի. հայեցարք ի կար
գս և ի կանոնս հարցն սրց և իրանելի նախնեաց. եթէ այդպէս սոմբրութի և կարգ. որ կիցէսն. թարց ժողովոյ
ենդց. և լրոյց. նա և հարց վանականաց լեռնակեաց կրօնաւորաց. և աշխարհաժողով հանդիսի. ինքնահաճ կամաք ըստ
ախարժակաց սրտի իւրոյ կոչեսցէ զոր ի պատիւ կիցէսցութիւ. եթէ այնպիսին ընդունելի եղեալէ. և այժմս լինիցի.ապա
թէ թիւր և զարտուղի .լինթայցից նախնեաց. ուրեմն ոչէ ընդունելի. եթէ հարցն առաջնոց և նոցին կանոնաց ոչ ան
ման. գանէ ի մերումս եղեալ ժամանակի հարցն անատոցին. որի թուաշարութիւ տոհմիս հայկական. հազար երորդի. հա
զարերորդի.և ասան և հինգ ամի. մեծ անուն վրդոյոք. երևելիք. և նշանաւորք ժողովեալն ի սր աթոռդ Էջմիածին հե
տ ունելով հարցն սրբազանից. և քանի գլխով բան կրթեալ յղոյ կիցէս ձեռնադրութիւ. թէ որ ոչ լինի այնոյ խոտելիք.
որոց գրեալ բանքն լուսաւոր հոգի մոխա վրդոյտին ձեռնադրով. և այլ սրբազան վրդոյոց կնքով և գրով առ մեզ.
որոց սատատն ևս առ ձեզ սատաքեցաք. եթէ այնց բանից միայն հանձայնի արարեալն ներկայիս. ապա է մեզ ընդու
նելի. իսկ թէ ոչ մեք ուրեմ ոչնմք պարտական եթէ զպարտան պարտանիցեցէ. այս քան առ առաջինն։ Երկրորդին
զոյս տարբ սրտիմի թէ գրեալեմք մեք. առ ահեր Եղիազար կիցէսն և ոչ կարեմք յուրատ լինել թէ որ քան դա
կենդանի ևս մեր կիցէս դա. ևս և իրեա քո կատարելիք կամաց քոց. և քոյոցն առնելոցեմք կիցէս. ահա Եղիազար
հոգևոր տիրին ոչ մի ունէր աշակերտ. այլ յոլով.եթէ մեք.յանուանէ մերդոյ անուն գրեալեմք.ապա թէ մեզ վրդ հատատ
ոի բանդ. իսկ թէ անորոշակի եմք գրեալ. ապա զուր ևնանիրէ մեզ վրդ ատատոցդ և անպատշաճ արարեալդ. ի յաւի
տենից ոչ ոք լուսա. թէ նախ քան զվերազանն վխճանեալ կիցէսի. ծանանիցի նոր կիցէս. զոր ահա եղև. մի թէ
Եղիազար հոգևոր տէրն այր ոգէտ երեւեցաւ. յաջ ամենց. քանզի իւր խոհեմութիւն և խորագիտութիւն ի գաղն յեմ նա
տաւ ի կատարելութիւ պօշիս. ասելով թէ ոչ ելիցէ ի սր աթոռն մինչև. ոչ գայցէ մանաւոր խոպանանաւ. և յորժամ առ
քեցաք խոյսն ելն. այսպէս լինի արարք առն խոհեմագունի. եթէ յալագս ինքեան այսպէ խորհէր. ապա վա այլոց
զի մարդ հրամայէր լինել առանց մեր մանաւորի. զոր յեա գործոյն կատարման թարց միայնական թղթոյ. ապա ինդ
բեալէին ի մենք մանաւոր. զոր մեք նորդեանս գրեալն. յայնժամեսեաք գրելոց. բայց երկրորդ հողեհեռնէսս և գոդ
ոստանեալ և կարծանեալ չաւեռս. կաշառակաւ եղեալ և արծաթով կուսացեալ. կրկին ևերեքկին անգամ ընկա
լեալ զկաշառ. լիսպասի հանքմ հանեալ և առաստեալ. առանց մեր մանաւորի. սարաչի և գիտառեմ. որոյ մի ևինքն կոր
ծանեցաւ. ևնոր քարանթարար հաստատեցաւ. Ս՝ատոսի խօջա. Պետրոսի որդի.բրիստոսիս. օրհնեալ խօջայ Ղազարոսն.
ամենեքին յոր ենման բարեպաշտութիւ հօրն իւրոյ։ Ա.յսու հետև կաշառն անդորձ եղեալ ձշմարտութիւնն թարգ

եւ աղղութիւն հաստատելոյ։ Յամէ այսու հետեւ մեզ սիրելիք իւրեանց զարմնալ քանզի գիշերն մերժեցաւ.եւ ոչ մեր
ձեզառ։ Զայս թուղթ մի այնր առաքեցաք առմեծութիւն ձեր։ զի ցանկանիցէք կենդանի.եթէ կամի դա բանաւ.
թիւ. եւ ժամանակ բազմի իւրոյ տիրել մեզ ոչ կարէ. քան զի մեք ոչ ամենք եմք արծաթագին. զի բարձրեալն որոյ տր
ութիւն սեփական է և իշխանութիւն բնութիւն. բանաբար ոչ ամենք տիրէ. թեզոյ թէ մարդ։ Իսկ ապա թէ արգարութիւն
և իրաւամբք տիրէ. հնազանդիմք և ամենք մառաւել քան զառաւել։ Եւ թէ զինչէ արդարութիւն և իրաւունք. այսինքնէ
գնալ ան խոտոր զաւիզս յառաջնոյն ոչց. եթէ նախնեացն և գերագունեցին ոչ.սակայն յետնոցն որն մերում ամենակի
զառաջնոցն ստացան վարս և առաւելութիւս. Ճշմարութիւն կարգաց և կրօնից հետեւելով. զլաստոր հոգիք Մովսէս և
Փիլիպպոս կենդանեցն ասեմք որն վերջին ժամանակս փայլեցան իրրև զարեգակն ջահառորեալք ի մէջ որ եկեղեցոյ.
և յաղագս հայաստանեաց։ Եւ զինչէ խնդիր մեր ուզոս. հանձնառաքար կարգեսցուք։երկոտասան զլս.։Այս զի կեր զի
կուս միջա և անապարակ ընթերցցի զանձային գիրս և ինքն նոմիմբ վարեսցի.և վարեսցէ զեկեղեցի։ Երկի. զի գարատուս
և զգաստուս հաստատեսցէ։ յամ տեղիս. ոչ սոմրութիւ այլ ազգեաց քրիստոնէից. և մանաւանդ թէ մեզ իսկ գլխոս
մին նա և պարսից և.ս. զոր գիտողացնէ քաջայայտ թէ որ քան ունին ջանք և փոյթ յայդմ իրի. քան զի շինութի և
հաստատութի ազգի գոլա լինիս ոչ և.ուսանեմք խորանցեալ և.անդիտանցեալ ազգն մրոց յաղագս ոչ ունելոյ փոյթ
զայնմանէ։ Երդիգ զի ինքն սառեղէն զգեցցի և.ոչ բամբակեղէն կամ վշեղէն և.ոչ այլոց թոյլ տայցէ։ Զոգդ. զատ և.առ
անձին ի միաբանից. ոչ յաղօթս կացցէ. և.ոչ հաց կերիցէ. այլ ընդ միաբանան հաղորդեսցի. ի յամ ազօթս և ի հաց
կերոյթ սեղանատեղոն։ Հինգրդ մի լոցի. առանձին տնտեսատուն և մառան. և մի իմ և.բս ի մէջ բերիցէ ի հնարակ տան.
ինքն իւրայոյքն առելորդաբ քան զհարկաւորն շատացեալ. և հաստաթին անինամ և անայցելու մնացեալ կարօտ հար
կաւորին. այլ զամն մի լոցի.եթէ գանձն եթէ շտեմարան.եթէ տնտեսատուն և.եթէ սեղանատուն վիցրդ.մի զարդարեալ
սիգաբաղ երիվարաբ յոխորտացեալ յօրանայցէ.այլ կիս իշեաբ շրջեսցի. ոչ և.տեսեալ խոկեմք զնախնին աչքք մերոյք։
Եօթն բրդ. ոչ ունիցի երկու կամ երեք և.ջաբ փարեակ ոչ այժմս լսեմք. այլ միոյ սուրհանդակաւ բանականաւ ոչ
նախնի կենդանեալքն։ Ութերդ. նոր զարմանս և.ծիծաղելիս ոչ առնել. այսինքն. թէ բարձել առաքի ըստ օրինի իշխա
նաց եղակս. մեկ. երկու. և.կամ առելի և.ապակաս. և.կապել թիւբ և.զարդարոյ.որ կարի հեռիւ ի հոգևոր իշխանութիւն.
զի զեն զենաորութիւն մերոյ ոչէ մարմնաւոր. այլ հոգևոր ըստ առաքելոյ։ Խնդրդ. ոչ պահել մասաղ մանկանս զոպասա
ւորս առաքի զարգարեալ գգեստիւք ի գայթակղութի տեարամանց. այլ կատարեալ հասակս. և.մարդ.ք սեազգեստ
և խոշորահանդերձ. ի յամօթ հակառակորդաց բամբասողաց։ Տասն բրդ. արանց տգիտաց և.անվարժից մի տայցէ պա
տիւ. եպիսկան. և.իշխանութի վարդապետական. քանզի նորա որ ունին զան և.աշխատասիրութի.ս.ման. տեսանելով զայլս
թարց զանից և.աշխատանաց ընկալեալ զպատիւ. եպիսկութիւ.և.զատրիճան վարդապետութիւ. և.նոքա յա.սահատեալ խտիան
լինին ի բարի յառաջադիմութիւ. և.մեայ ազգս ի մէջ անգիտութիւ խառարի յաղագս անընտրութիւ. ըստ արիստոտ
ելի որսաւ.եթէ կամիս բարեկարգութի տան.ընտրեա զ լուն ի վատթարէն. և.զվատկարն յանձնեն.և.ըստ խնասանցն
թէ զիտաս խնամանք ժառանգեցեն։Մեռասան բրդ. ոչ ածել պատիժս անպատշաճ ի վրդ ուրբ անչարմար կարգի
և.ատիճանի.ոչ լսեմք թէ այս ինչ մարգոյ մարուս կորեալէ. և.այս ինչ մարդ ի սիւն կապեալ. ոչ մի անգամ լսեմք.
այլ յոլովակի. ուսի ունի օրինակ զայդպի անուպայ արարմանց. զայր եկաս առանց ժողովոյ և.գատաստանի. ի ժամ հաց
կերութիւ և.գինի ըմպելութի կապել խարն և.բրածեծ տալ առնել արանց սրիկայից և.եղանակաց.և.յետոյ զմուրանցատա
նել բարեպաշան կատանդիանս երբ արար գայդ արիսի թէպետ և.սպանմաներ արժանի. և.կամ փոքրն թեռգոս առ
նեսոր երբ գործեաց զայդ. և.կամ հայրապետքն ոչք. երբ օրէնս վարկան և.իրաւունք համարեցան այդպիսի գատաս
տանաւ գատել զեկեղեցական. և.մանաւանդ եպս. ոչ գրէ այն կիւրեղ ազէքանդրացի.յաղագս պղծոյն նեստորի թէ
յուծումն արքայ գնա յեղապատեն.իրաւամբք ժողովոյն.զի մասեաս հոգևոր տէրն երբ արար զայդ. և.կամ յուսաւոր հոգի
փիլիպպոս կենդանի.իկ.ամ վարեալ զկենդանեն։ երբ և կամ ոչ մարուս կարեաց կամ սիւն կապեաց. նոյնպես և.յա
կոբ հոգևոր տրն. քանզի հինգ ամ կացեալ յանձառն միայն ոնոիրիասին եաթ զայդ պատիժ նմին աշխարհ վկայեր մարդ
գլ արժանի. և.ոչ իակ պատմ.զ. զոր ամ.մն տարի և.կեակ քանիսն լսեմք զայդպի խայտառակեալ.զուր և.ունայն պատճա
ռաւ. այդպիսի պատիժ քաղաքական օրինի և.գատանիի անկ.և.ոչ եկեղեցին։ մերոյ ոչ կամիմք զայր եպս կամ վարդապետ.թա
ր ժողովոյ և.նանոնաց գատել կամ պատժել։ յորմէ պատճառ վասս յոլովս ծնանի. զի ժամանակս չարք։ Երկոտասն բրդ. մի
փիսիսանցէ զնեմ և.զրիճակ եպիսկ.ըստ նմանութի երբիշցի և.շմուէլի որ մինն զմեռեալ եպիսկ յատիճակէր. իսկ
մինն և.զկենդանի եպիսկ.ոչ գրէ բերթողահայրն մասիս խիսպագրութի իւրում այլ ըստ ուղիղ կանոնաց առաքելական
և.հայրապետական. իւրաքանչիւր եպս տիրէ յիւրում վիճակին. և.իւրաքանչիւր թեմ յիւրում սեթողոյ կացցէ և մնացցէ
զոր ի բնէ ունի կարգեալ և.հաստատեալ.բայց թէ առաջնորդ եպսն անուղղագրես ունիցի. գատեսցի ըստ իրաւանց
կանոնաց և.կոչցի. և.ոչ արժանի պատժեսցի.քան զի խիստիսմանէ և.իրաժանմանէ բազում չարիս ծնեալէ.ծնանի և.ծնա
նելոյ.ի. ըստ տրուականին բանի տուն. քաղաք.և.գիւղ.թի բաժանեալ կործանի. և.զի ազգ.ն.գ.ի քաջայայտ որ իւրաքան
չիւր սեթող. պահեալէ ընդ իւրոյ վիճակին.որոց ոչէ պիտ բաժանիլ ի միմեանց թէպետ յետ սրբասէր կենդանին տեսուն
փիլիպպոսի. ոչ բաժանումն եղեալէ. և.այն ոչ կանոնական իրաւամբք. այլ յանիրաւ յարձակմանէ. որոց յայտմ հետ ոչ
կամիմք և.ոչ թողացուցանեմք լինիլ զայն անկարգութի։ Եւ ի վրդ այսր ասի. ասուսպատրի մինոն արտաքսեսցէ և.հալա
ծեսցէ ինքն սեթողոյդ և.յայրաբատ գաւառ.է. և.կրօսցէ ի բնիկ տեղի իւր. և.զոր ինչ ստացեալէ և.ունի. իրեսցէ ի ձեռ
ս.այն. մերս.ս կորելոյ. սիւն կապելոյ. և.բրածեծ առնելոյ գամ արժանի. և.ոչ այս և այն. հալածեալ կորուսանիցէք
ձեռ.ադրելոյ որ այլ ,ելեւան ջրեսք բարիք. ապա թէ.ոչ ձեմիսին յայտնիք. մեք առնեմք տրքունի հրամանաս. և.գիտեմք
թէ ոչ անպատմելի և.սանասելի խայտառակութիւ կորուսանելոյեմք հանդերձ գատապարտական պատժիւ.ք. քանզիգա
և.բազմագիմի կաշառ.ք կուրացուցանեք զայսգարշելի այրակերպ գազանս. յաղագս իդլուխ հանելոյ զիւր չարութիւ
գործն. մերոյ ոչ կամիմք այդպի բանսարկու և.շղագոգ առն մնալ ինքն և.ի հեշակատոր տեղիդ. այլ յանկեան ուրեք ծակա
մառ կացցէ.ոչ և.արժան խնէ։Ա.հա զայս երկոտասան բանք կարգեալ.ք պահանջեմք ի կեղծսն ոմքը և.իցէ և.զայս
բանս խնդրանաց և.ղրայրական սիրով առ մեզ առաքեցաք իրրև անգամք միմանց տիներով ցանակիցք. և.գուք տարեալ
ցուցէք իւրն. եթէ հաւանի և.ընդունի գրով և.կնքով իւրով. և.վկայութիւ երկանիկ եպոյ առ մեզ առաքեցէ իրրև
զարեւելիք անկիզ մայ առ մեզ յայնժամ և.մեք սիրով հրա.ս հաստատութիւ մնալոյ.ք նմա իրրև զիսոյ. և.ինքն
թագեսցէ.յեկեղեցիս մեր ոչ զարեգանն. ապա թէ ոչ ընդունիցի զասացեալս մեր և.կամ գրեալ.ս խոտան հանարեսցի.
յայնժամ զգրեանս մեր գաղանալիք լեռս յայնմ հետ գիտեմք և.մեք թէ ոչ պարտանիցէ առնել յամ կողմանէ անխիղճ։
Տգեցաւ տիպս. երկու հարիւրդրան որ ամենասիրելի վանացս նոր զա.զայս.։Զիսպահան Քաղաքի. ի թեռ.ս.մ։Վենա
բարին մերոյ հազար վեց հարիւրնոսուն և.երեք։Եւ ի Հայոց. հազար հարիւր քառասուն և.երկու.։Յամենանն Մայիսի ։։

ГРАЧИК МИРЗОЯН – ***Имели ли место собрания, направленные против Иакоба Джугаеци? (Критический анализ старопечатных источников).*** – Скрупулёзно разбирая важный исторический документ «О чине рукоположения в католикосы», изданный в 1693 г. типографией монастыря св. Всеспасителя в Новой Джуге, автор приходит к следующему выводу. Это не решение настроенного против Иакоба Джугаеци собрания, которое состоялось в первой половине декабря 1665 г. в Ереване, но резолюция по итогам обсуждений, состоявшихся по инициативе Иакоба Джугаеци в Эчмиадзине на рубеже 1665–1666 гг. Резолюция была направлена против раскольнических действий по созданию самостоятельного западноармянского католикосата, развёрнутых Елиазаром Айнтапци.

Проанализировав далее ряд положений известного документа, приписываемого вардапету Оноприосу Ереванци, автор категорически отрицает возможность того, что в октябре 1664 г. в Ереване состоялось направленное против Иакоба Джугаеци собрание.

В статье вкратце рассмотрены идеи, развитые в послании эчмиадзинской братии, которое было направлено весной 1693 г. от имени духовного и светского главы Новой Джуги. Автор полагает, что многие из них доныне не утратили своей актуальности и могут способствовать решению сходных задач, стоящих ныне перед нашей страной. С учётом этого публикуются оригиналы двух появившихся в 1693 г. документов без каких-либо изменений.

HRACHIK MIRZOYAN – ***Have There Been Meetings against Hakob Jughayetsi? (Critical analysis of early printed sources).*** – Scrupulously examining the important historical document "On the rank of Catholicos ordination" published in 1693 in the typography of All Savior's Monastery in New Julfa, the author comes to the following conclusion: This is not a decision against Hakob Jughayetsi meeting, which was held in the first half of December 1665 in Yerevan, but a resolution on the results of the discussions held at the initiative of Hakob Jughayetsi in Etchmiadzin at the turn of 1665-1666. The resolution was directed against the schismatic action to create an independent Western Armenian Catholicate, deployed by Yeghiazar Ajntaptsi.

After analyzing a number of provisions on the famous document attributed to Vardapet Onoprios Yerevantsi, the author denies the possibility of the meeting held in October 1664 in Yerevan directed against Hakob Jughayetsi.

The article briefly discusses the ideas developed in the epistle of Echmiadzin fraternity, which was sent in the spring of 1693 on behalf of the spiritual and temporal head of New Julfa. The author believes that many of them are still relevant and can help address similar challenges facing our country. In consideration of this, two original documents, which appeared in 1693, are published without any modifications.